

ԱՆԿԱՐԵՆԻ ԿԱՐԵՆԻՆ	Էջ 2
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ...	Էջ 3
Հ.Բ.Ը.Մ.-Ի 91-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԱԸ	Էջ 4
ՓԱՆ ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱՌՈՐՈՒՄԸ	Էջ 5
ԶՈՐՐՈՐԴ ՆԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ...	Էջ 6
ԻՆՉՈ՞Ւ ԱՏՐՊԵՅԱՆԻ ԱՏԵՆՈՒԹԻՒՆԸ...	Էջ 7
Չգայացունց Դեպքերի Ժամանակաշրջան	Էջ 8
Գորշ գայլերը Շուշիում	Էջ 9
ԱՆՀԱՆՔԻՍ ԿՈՎԿԱՍ	Էջ 13

ԱՅԼԵՄ ՅՈՒՍԱԶԱՏ ... ՄԱՅՐ ՀԱՅԱՏԱՆԸ ՎԱՐ ԿԸ ԴՆԷ ԻՐ ՍՈՒՐԸ ՈՒ ԿՈՐԲԱՅ ՄԵՐ ԴԺԲԱՆՏ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՀԱՄԱՐ



29 ՏԱՐԻ ԱՌԱՅ ՄԱՐՏ 2-ԻՆ ՀԱՅՈՑ ԵՌԱԳՈՅՆԸ ՍԿՍԱԻ ԾԱՇՄԱՆԻ ՆԻԻ ԵՈՐԺԻ ՄԱԿ-Ի ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ ԱՌՋԵԻ ... ՅՈՒԶՈՒՄ ԿԱՐ ՆԵՐԿԱՆԵՐՈՒՆ ՄԷՋ - ԱՅԼԵՄ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԵԻՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՈՐՊԵՄ ԼԻԻՐԱԻ ԱՆԴԱՄ



Դիւանագիտութեան ծառայութեան դերը՝
հայրենիքի ապահովութեան եւ հայ
ժողովուրդի շահերուն եւ իրաւունքներուն
պաշտպանութեան գործին մէջ

«ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ՋԱՐԴԵՐԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿԸ ՅԻՇԵՑՆԵՆ ՄԻՇՏ ՄՆԱԼՈՒ ԱՐԹՈՒՆ ԵՒ ՄԻԱԿԱՄ»

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այս տարի 33-ամեակն է Ատրպէյճանի Սումկա-
յիժ քաղաքին մէջ հայ խաղաղ բնակչութեան դէմ
թուրք-ազերիներու կողմէ գործադրուած ջարդե-
րուն:

Կիրակի, 28 Փետրուար 2021-ին, Անթիլիասի
Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր
Տաճարին մէջ, Ս. եւ Անմահ Պատարագի աւար-
տին, նախագահութեամբ Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա.
Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ հոգե-
հանգստեան արարողութիւն Սումկայիժի ջարդե-



րուն պոհուած ու նահատակուած հայորդիներու
հոգիներուն համար: Ապա, Վեհափառ Հայրա-
պետը Cilicia TV-ին հետեւեալ յայտարարութիւնը
կատարեց.-

«Յիշեցնիք Սումկայիժի մեր պոհերը ու աղօթե-
ցինք անոնց հոգիներուն խաղաղութեան համար:
Արդարեւ, նոյն ցեղասպանն է, որ տարբեր պիտակ-
ներով (թուրք եւ ազերի) եւ տարբեր ժամանակ-
ներու (1895-6 Համիտեան ջարդերը, 1909 Ատա-
նայի ջարդերը, 1915 Հայոց Ցեղասպանութիւնը,
1988 Սումկայիժի ջարդերը, 2020 Արցախի պա-
տերազմը), իր արիւնաթաթախ սուրը ուղղած է, եւ
տակաւին կրնայ ուղղել մեր ժողովուրդին դէմ:
Արդ, ըլլանք արթուն, միակամ, կազմակերպ ու
զօրեղ: Հաւատքով կռաւուած մեր ժողովուրդին
կամքը մեր հպօր վահանն է այն բոլոր փորձերուն
դէմ, որոնց նպատակն է Հայաստանը տկարացնել,
Արցախի անկախութիւնը մերժել, ցեղասպանու-
թիւնը մոռացութեան դատապարտել եւ Հայաս-
տանն ու հայ ժողովուրդը իրենց աշխարհաքաղա-
քական շահերուն ենթարկել:

«Հետեւաբար, մեր հաւաքական Տունը՝ Հայաս-
տանը, պետք է կառուցենք Աւետարանին բացատ-
րութեամբ այն տան նման, որ երբ «անճրենները
կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ
կը վարնուին տան, բայց տունը չի կործանիր, որով-
հետեւ ժայրի վրայ հաստատուած է» (Մտ 7.24-25):

ՏԻԿԻՆ ՏՈԼՄԱՋԵԱՆ ԱՏԱՅԱԾ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻ ԱՍՏԻՃԱՆ

ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանի Մարտ 4-ին
ստորագրած հրամանագրով դիւանագիտական աս-
տիճան շնորհուած է կարգ մը դիւանագետներու:

Այսպէս, արտակարգ և լիազօր դեսպանի դիւանա-
գիտական աստիճան շնորհուած է Ֆրանսայի մէջ Հա-
յաստանի դեսպանուհի Յասմիկ Տոլմաճեանին եւ Հա-
յաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նա-
խարարութեան սահմանակից երկիրներու վարչութեան
պետ Արսէն Աւագեանին: Իսկ Էրպիլի մէջ Հայաս-
տանի Հանրապետութեան աւագ հիւպատոս Արշակ
Մանուկեանին շնորհուած է արտակարգ դեսպանորդ
և լիազօր նախարարի դիւանագիտական աստիճան:



Տիկին Տոլմաճեան նախագահ Մաքրոնի հետ

ՆԱԽԱԳԱՅ ԴԵՐՃ ՍԵՐԱՆԿԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԱԾ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ 91-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԱԸ

27 Փետրուար 2021

Արտակարգ պայմաներու տակ է որ հաւաքուած
ենք այսօր: Պատմութեան մէջ առաջին անգամ
ըլլալով, անդամակցութեան, մասնաճիւղերուն եւ
Կեդրոնական Վարչութեան հանդիպումը կազ-
մակերպած ենք առցանց:



Բարեբախտութիւն է, որ ճարտարագիտութեան
ընչեռած կարելիութիւններով, կը յաջողինք հա-
ղորդակցիլ իրարու հետ, ներկայ ժամանակներուն:

Բոլորս անցած ենք ժահրային համավարակի
փորձառութեան ընդմէջէն, որ չէ խնայած որեւէ
երկիր կամ համայնք, խլելով բազմաթիւ կեանքեր:

Այս միջոցին սակայն, մեր կարելին ի գործ կը
դնենք, գնահատելու համար կեանքի բարիքները,
մաղթելով, որ մեր կեանքերը մօտիկ ապագային
վերագտնեն իրենց բնականոն հունը:

Հ.Բ.Ը.Մ.ի համար կենսունակութիւնը չէ կա-
սած բնաւ: մենք կը շարունակենք հասնիլ մար-
դոց, ծրագիրներ մշակել գոհացում տալու համար
երիտասարդութեան հետաքրքրութիւններուն,
հակազդել նաեւ համաշխարհային իրադարձու-
թիւններուն, մանաւանդ անոնց, որոնք անմիջա-
կանօրէն կը վերաբերին մեր ժողովուրդին:

Կեդրոնական Վարչութեան անդամները չեպի
պիտի ներկայացնեն եւ բացատրեն հաշուական
մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ 2018 եւ
2019 տարիներու գործունէութիւններու երկամ-
եայ համապատկերը: Որպէս ընդգծում, ես կրնամ
հաստատել, թէ նշանակելի իրագործումներու
տարիներ էին անոնք, որոնք կարելի դարձան
չեզմէ իւրաքանչիւրին մասնակցութեան շնորհիւ:
Միջազգային գետնի վրայ, մեր ազգը ուշագրաւ
պարգայտում արձանագրեց: Կը թուէր, թէ աշխար-
իւ մեր կողքին է եւ մենք սկսած ենք իրականացը-
նել ազգերու համայնքին մէջ մեր արժանի յա-
ռաջխաղաքը:

Դժբախտաբար, այդ տարիներու փայլուն չեղ-
բերումներէն ետք, 2020-ը տառապալի եղաւ մեր
բոլորին համար: Մինչ համավարակը չկրցաւ
կոտրել մեր ոգին կամ կասեցնել մարդասիրա-
կան ծառայութիւններու մեր յարաճուն թափը,
կարծէք տարեակիցի պատահարները, նախադե-
պերն էին գալիք ծանրագոյն մարտահրաւե-
րներուն: Օգոստոսին, Լիբանանի մեր համայնքը
կ'ենթարկուէր Պէյրութի նաւահանգիստին մէջ
պատահած աննախադեպ պայթումի ծանր հետե-
ւանքներուն: Աղետը կը հարուածէր քաղաքի հա-
յաիոծ շրջանները, ուր մեր համայնքի կարեւոր
մէկ մասը հաստատուած էր:

Անոնց աշխատանքը կարելի եղաւ չեր բոլորին
միաւորուած ճիգերով, որով դուք աջակցեցաք
արագ եւ լայնատարած դրամահաւաքներով:

Լիբանանի աղէտէն անմիջապէս ետք, հայ ազ-
գը դիմագրաւեց իր ժամանակակից պատմութեան
ամենադժնդակ իրադարձութիւններէն մին, որ
ծանր ազդեց մեր բոլորին վրայ, չգելով երկարա-
տեւ հետեւանքներ: Սեպտեմբերի 27-ին, Ազերի
ոյժերու կողմէ սանձազերծուած կործանարար յար-
ջակումը, թրքական բանակի իրամասնատարութեան
եւ ռազմական վիթխարի միջոցներու աջակցութեամբ,
յանգեցաւ Արցախի պատմական հողատարածք-
ներու մեծ մասի կորուստին: Ինչ որ ամենաաղի-
տալին էր, ունեցանք շուրջ 5,000 պոհեր եւ աւելի
քան 10,000 վիրաւորներ: Մեր խոստմնալի երի-

(Շար.ը տեսնել Էջ 15)

Խմբագրական

ԱՆԿԱՐԵԼԻ ԿԱՐԵԼԻՆ

Կարելին այդ է միայն, անըջական կարելին, Բարեկամներ՝ որ մէկտեղ կ'ուզեն, կ'զգան, կը խորհին Անկարելին, կարելին ...:

Վահան Թէքեան

Յետպատերազմեան վիճակը Հայաստանի մէջ անլուծելի խնդիրներու կծիկ մը դարձած է: Սակայն, քաղաքականութիւնը կը շարունակուի նոյն կարգով ու եղանակով: Վիճակ մը որ առաջնորդեց այսօրուան տխուր ու ողբալի պայմաններուն: Հետեւաբար ի՞նչ է ելքը դուրս գալու համար ներկայ վիճակէն եւ բռնելու վերականգնումի ճամբան: Պէտք է դիմել չիորձը-ւածին, չմտածածին, եւ անկարելի թոող պայմաններուն ու միջոցներուն:

Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը ցոյց կու տայ իր բազուկները ընդ-դիմութեան ու հրաւեր կը կարողայ ընդդիմութեան – 17երու համախմբում, հանրապետական եւ Քոչարեան եւ այլն: Սկսած է ամբոխավարութեան մրցում մը. թէ ո՞վ կրնայ հրապարակի վրայ աւելի ամբոխ հաւաքել: Յով-հանճէս Թումանեան ատենին սահմանագիծը դրած էր ամբոխին ու ժողովուրդին միջեւ: Ու եթէ ամբոխը պիտի հաւաքուի եւ ընտրէ Փաշինեանն ու իր խումբը՝ ի՞նչ պիտի ըլլայ արդիւնքը. վստահաբար միեւնոյնը: Եթէ այսօրուան արիւնոտ պարտութիւնը, կոտորած Հայաստան մը եւ անյոյս բնակչութիւն մը բաւարար դասեր չեն եղած ամբոխին՝ թող շարունակէ ան միեւնոյն ընթացքը յանգելու համար միեւնոյն արդիւնքներուն եւ գումարող յեղափոխութիւններ սարքող շրջանակներէն ստանայ ծափեր ու գնահատանքներ որ յաղթանակ տարաւ «ժողովրդավարութիւնը»: Այսօր ժողովրդավարութիւնը բառը դատարկուած է իր օրինական բովանդակութենէն՝ դառնալով համար պիտակում՝ արեւմտամէտ քաղաքականութեան: Նման պիտակումներով, օրինակ, Արեւմուտքը, Սեւտական Արաբիան եւ Էմիրութիւնները բնորոշած է իբրեւ «չափաւորական» (moderate) իշխանութիւններ, մինչդեռ անոնք, պատմական եւ օրինական չափանիշերով բացարձակ միապետութիւններ են: Հետեւաբար, եթէ այսօր Հայաստանը պիտի որակուի «ժողովրդավար» պէտք է հասկնալ արեւմտահաճոյ: Այսինքն ժողովուրդի կեանքին մէջ փոփոխութեան ռեւէ չափանիշ պիտի չդրսետորուի:

Գալով ընդդիմութեան եւ 17երու համախմբումին, որոնք կը ձգտին իշխանութեան, ոչ միայն որակուած են, այլ իրենց անցեալի կենցաղով եւ վարած քաղաքականութեամբ ապացուցած են իրենց դիմագիծին ռուսամէտ բնոյթը: Պիտի ըստի, գուցէ, թէ փոքր երկիրները այլընտրանք չունին՝ բացի ապաւինելէ հզօր պետութեանց, կամ կողմնորոշուելու ի նպաստ աւանց: Թուրքիան, իր հերթին, կը կիրարկէ միեւնոյն քաղաքականութիւնը. սակայն, ան կ'օգտագործէ, աւելին՝ կը շահագործէ Արեւմուտքի դաշնակից ըլլալու եւ ՆԱԹՕի անդամակցութեան իր հանգամանքը, ի շահ իր ազգային օրակարգին. օրինակ, թուրքական կայսրութիւն մը կենդանացնելու իր ծրագիրներուն: Միեւնոյն սկզբունքով ալ կը յենի Մոսկուային, կը շահագործէ Ռուսաստանի հետ իր ունեցած յարաբերութիւնները, դարձեալ ի շահ իր տնտեսութեան եւ ռազմագիտական նպատակներուն:

Քաղաքականութեան մէջ ռուսամէտ կամ արեւմտամէտ ըլլալը, ռեւէ փոքր ազգի համար բնական երեւոյթ պիտի ըլլար այսօրուան աշխարհի քաղաքական դրուածքին մէջ, սակայն այդ քաղաքականութեան նպատակը եւ հետեւանքը պէտք է ըլլայ մեր ազգային օրակարգը:

Հայաստանի մէջ գործող քաղաքական ոյժերը մինչեւ որ չանդրադառնան թէ իրենք կալանաւորն են այս երկու հոսանքներու պարանաձգութեան՝ պիտի չկրնան իրականացնել ազգային օրակարգ մը:

Արդե՞ն Հայաստանի թշուառութիւնն ու դժուարութիւնը այն է որ գոյութիւն չունի իսկական քաղաքական համակարգ: Ժողովրդավար երկիրներու մէջ այդ համակարգը կը ստեղծուի հասուն, հաստատ եւ գաղափարաբանութիւն ունեցող կուսակցութիւններով: Հայաստանի մէջ, երեսուն տարուան ընթացքին չկազմուեցան նման քաղաքական կուսակցութիւններ, իւրաքանչիւ փիլիսոփայութեամբ եւ գաղափարաբանութեամբ: Այդ պատճառով է որ ամբոխը կը քուէարկէ ի նպաստ Սերժ Սարգսեանին, տասը հազար դրամի դիմաց, կամ կը հետեւի Նիկոլ Փաշինեանին, երբ ան կողորդապատառ կը պոռայ հրապարակի վրայ:

Այսօր, ամբոխի կողմնացոյցին հետեւելով կարելի է գուշակել որ եթէ կայանան արտակարգ ընտրութիւններ՝ դարձեալ կրնայ յաղթել Փաշինեանի խումբը, ոչ անոր համար որ ժողովրդավարութիւն կը տիրէ Հայաստանի մէջ, այլ անոր համար որ ընտրող հասարակութիւնը գուրկ է քաղաքական հաստութենէ եւ անգիտակից զոհն է այն հոսանքներուն, որոնք Արեւելքէն ու Արեւմուտքէն բափանցած են Հայաստանի քաղաքական ենթահողին մէջ:

Ամբողջ 44 օրերու ընթացքին միջազգային հասարակութիւնը լուռ ու մունջ կը հետեւէր արցախեան պատերազմին, բացի Ֆրանսայի մէկ վատոյժ նախաձեռնութենէն: Արիւնը հոսեցաւ, Հայաստանի պատմական հողը գրաւուեցաւ եւ պատերազմէն տասնեակ հազարաւոր հաշմանդամներ ծառանգ մնացին:

Սակայն, հազիւ օդին մէջ երեցաւ զինուորական յեղաշրջումի մը ուրականը՝ Միացեալ Նահանգները, Եւրոպական Միութիւնը, եւ մինչեւ անգամ ՆԱԹՕն, որուն զէնքերով արհիւնցաւ Հայաստանը, սկսան բարձրաձայնել թէ դէմ են «պետական յեղաշրջումի»: Մինչեւ անգամ Էրտողան եւ Ալիեւ միացան այդ համագարկին: Եւ կոչը այն էր որ պէտք է պահպանուի Հայաստանի «ժողովրդավարութիւնը»: Այս վիվուկը խօսուն ապացոյց է որ Արեւմուտքը Հայաստանի «թաւշեայ յեղափոխութիւնը» կը դասէ միւս գումարող յեղափոխութեանց շարքին- Ուքրանիոյ նարնջագոյն յեղափոխութիւն, Վրաստանի վարդերու յեղափոխութիւն եւ վերջերս ալ՝ Պելառուսի խլրտումները:

Հայաստանի քաղաքական ոյժերը - եւ անոնց ածանցները – անխնայ եւ սպաննիչ պայքար կը մղեն իրարու դէմ, մինչ թշնամին սահմանին վրայ կը շարունակէ սպառնալ պատերազմը շարունակելու: Իլիհամ Ալիեւ կը յայտարարէ որ Հայաստան ալ պէտք չունի բանակի. ի՞նչ բանի համար է բանակը, կ'ըսէ ան, երբ մենք պատերազմով արդէն լուծեցինք Արցախի խնդիրը: Միւս կողմէ, տնտեսական համաժողովի մը ընթացքին կը յայտարարէ, թէ Նոյեմբեր 9ի յայտարարագիրով Ատրպէյճան անցը մը պիտի ունենայ «Ատրպէյճանի պատմական հողի վրայով, Զանգեզուրով»:

Այս յոխորտանքը կը յիշեցնէ ուղիղ հարիւր տարի առաջուան իրավիճակը երբ Քեազիմ Բարապէթիը Հայաստանին պարտադրեց ստորագրել

Ադրբայճանի դաշնագիրը, որով Հայաստան պիտի չունենար ազգային բանակ (բացի տեղական ոստիկանութենէ) եւ Թուրքիան իրաւունք պիտի ունենար ազատ անցք ունենալու Հայաստանի հողամասին վրայ: Բարեբախտաբար շրջուեցաւ եւ ջնջուեցաւ Ադրբայճանի դաշնագիրը. սակայն, այսօր ի գօրու է Նոյեմբեր 9ի անձնատուութեան փաստաթուղթը:

Աւելին ըլլալով՝ Ատրպէյճան ոչ միայն Թուրքիոյ դաշնակցութեամբ կը հզօրանայ, այլ երկու երկիրները միասին ռազմական դաշինքի մէջ մտած են իսլամապաշտ Փաքիստանի հետ, որ Պէն Լատըններու եւ ահաբեկիչ Թալիպաններու որջն է: Այս ռազմական գործակցութեան նպատակը շատ պարզ է: Փաքիստան տերն է «փայմական հիւլէական զէնքին» եւ Թուրքիա արդէն հրապարակաւ ցանկութիւն յայտնած է հիւլէական ոյժ դառնալու: Այս դաշնակցութիւնը առաջին քայլն է Թուրքիոյ հիւլէականացումին:



Երբ թշնամին այսքան կը հզօրանայ եւ բացայայտօրէն կը սպառնայ Հայաստանի իսկ գոյութեան՝ մեր երկրի ժողովուրդը այնքան անհեռատես ու յիմա՞ր է որ կը շարունակէ ինքզինք բզկտելու պայքարը:

Որովհետեւ Հայաստանի կուսակցութիւնները խորհրդանշուած են անձնաւորութիւններով, կամ անոնց քսակներով, հետեւաբար երկրին մէջ կուսակցական հակամարտութիւնները անձնականացուած են: Աւեր կը գործէ համացանցը ստորին մակարդակի պայքարներով, որոնց ընթացքին բռնաբարելով նաեւ հայոց սրբազան լեզուն:

Ինչպիսի՞ քաղաքական իմաստութիւն եւ հասունութիւն՝ որ հինգ հազար մահացողներու եւ տաս հազար հաշմանդամներու ճակատագիրը անտեսելով դեռ շարունակել Մարտ 1ի դատերն ու վէրքերը:

Հայաստանի բոլոր իշխանութեանց օրով Հայաստան ունեցած է փայլուն դիւանագէտներ, պետական դէմքեր, տնտեսագէտներ եւ զինուորականներ: Բայց այսօր չ'օգտագործուիր անոնց ներուժը, որովհետեւ անոնք սեւի եւ սպիտակի սահմանագիծէն անդին կը գտնուին. վստահաբար նման ոյժեր կան նաեւ ներկայ երիտասարդ իշխանութեան շարքերուն մէջ սակայն, որուն որ խօսիք, որ մէկ հոսանքին ալ դիմէք, բոլորը միաբերան պիտի ըսեն անհնար է, անկարելի է այդ բոլոր ոյժերուն համախմբումը, որպէսզի փոխանակ իրարու դէմ պայքարելու, ոյժերը միացնելով պայքարին թշնամիին դէմ:

Եթէ արտահերթ ընտրութիւններ կայանան եւ յաղթական դուրս գայ Փաշինեանը՝ միայն ազգային աղէտ կրնայ պատահիլ: Նոյնքան աղէտալի է երբ Վազգէն Մանուկեանը դառնայ վարչապետ, իսկ կատարեալ ողբերգութիւն կը դառնայ երբ բանակը ձեռք առնէ իշխանութիւնը: Որովհետեւ, բոլոր պարագաներուն մէջ յաղթական կողմը պիտի փորձէ ջախջախել հակառակորդը: Բայց ի՞նչ յաղթանակ, ի՞նչ հաճոյք երբ Հայաստանն ամբողջ ջախջախուած է:

Ժամանակն է փորձելու անկարելին: Նախ խափանել դիմատետրերն ու համացանցի լպիրշ արշաւանքները: Համախմբել բոլոր կողմերը եւ կազմել ազգային համաձայնական դաշինք մը եւ այդ սկզբունքով պատրաստուիլ արտահերթ ընտրութիւններու:

Եթէ վերսկսի պատերազմը՝ բոլոր նախանձախնդիր կողմերը որոնք իբրեւ թէ պաշտպան են Հայաստանի ժողովրդավարութեան պիտի պահպանեն միեւնոյն լռութիւնն ու անտարբերութիւնը, Հայաստանը կրկին թողնելով իր ճակատագրին: Ուրեմն Հայաստանի ժողովուրդը – եւ ոչ ամբոխը – պէտք է լուծէ իր եւ իր երկրին ճակատագրի հարցը՝ իրականացնելով անկարելի կարծուած կարելին:

Պատասխանատու խմբագիր՝	Երուանդ Ազատեան (Տիրոյթյօ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջորգի)
Խմբագրական Կազմ	
Տոբթ. Յարութիւն Արզումանեան	(Մոկթեալ)
Յակոբ Աւետիքեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուք)
Զաւէն Գրիգորեան	(Աթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Հասցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A. E-mail: baikarweekly@gmail.com Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ՝ ԱՊԱԽԵՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՐՕՐԵԱՅ ՑԱԽԵՐՈՒ ՓԱՐԱՏՄԱՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Ֆրանչիսկոս Ա. Կաթոլիկ Եկեղեցւոյ Բաժանայապետի հրամանով՝ անց-նող 2021 թուականին Փետրուար 2ին Սուրբ Գրիգոր Նարեկացին ընդգրկուեցաւ Լատինական Եկեղեցւոյ ծիսական օրացոյցին մէջ: Յետ այսու ամէն տարի 27 Փետրուարին Կաթոլիկ Եկեղեցին պիտի յիշատակէ Հայ Եկեղեցւոյ այս մեծանուն վարդապետը: Յիշենք...12 Ապրիլ 2015 թուականին Վատիկանի Սուրբ Պետրոս Տաճարէն ներս, Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելի-ցին մատուցուած Սուրբ Պատարագի ընթացքին Սրբազան Պապը Նա-րեկացին հռչակած էր «Ընդհանրական Եկեղեցւոյ վարդապետ»: Երեք տարի անց՝ 5 Ապրիլի 2018 թուականին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եւ Մեծի Տանն Կաթողիկոսի հետ, Սրբազան Բաժանայապետը օրհնեց՝ Վատիկանի պարտէկներուն մէջ տեղադրուած Նարեկացիի արչանը: Անցեալ 27 Փետրուարին, Կաթոլիկ Եկեղեցւոյ Սուրբ Պետրոս Տաճարին մէջ առաջին անգամ յիշատակուեցաւ Սուրբ Գրիգոր Նարեկացին: Պատարագէն ետք Վատիկանի պարտէկներուն մէջ Նարեկացիի արչանին շուրջ տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն մեր նախագահութեամբ, որուն ընթացքին աղօթակից ունեցանք կարտինալներ Լեոնարտօ Սանտրի եւ Քուրտ Քոլար, Մխիթարեան միաբանութեան քահանայապետական պատուիրակ Տ. Լեւոն Արքեպիսկոպոս Չեքիեանը: Իրենց մասնակցութիւնը բերին նաեւ հայ առաքելական եւ հայ կաթողիկէ եկեղեցիներու հոգեւորականներ:

Որպէս Հայ Եկեղեցւոյ զաւակներ՝ հպարտ ենք, որ մեր եկեղեցւոյ սրբա-կենցաղ եւ հանճարեղ մեծ վանականը կը գնահատուի ու կը մեծարուի՝ որպէս մեծ վարդապետ, Քրիստոնէայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն կողմէ: Չնայած Նարեկացիի հանճարը ունի լայն տարածում. Անոր «Մատեան Ողբերգու-թեան» (Նարեկ) աղօթագիրքը եւ իր տաղերը, ինչպէս նաեւ այլ գրութիւննե-րը թարգմանուած են տարբեր լեզուներու: Ոչ-հայ գիտնականներ բազում ու-սումնասիրութիւններով, հրատարակութիւններով եւ դասախօսութիւններով արժեւորած եւ փառաբանած են անվուգական Նարեկացիին հանճարը:

Կ'ուզենք յիշել Ֆրանչիսկոս Սրբազան Բաժանայապետի, 25 Յունիս 2016 թուականին տուած պատգամը, Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ կազմակերպուած միջեկեղեցական արարողութեան ընթացքին՝ որուն միասնաբար նախագահած էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ: Սրբազան Բաժանայապետը մէջբերումներ կատարեց Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետէն եւ Ս. Գրիգոր Նարեկացիէն: Ան մասնաւորապէս շեշտեց «Ս. Գրիգոր Նարեկացիի բացառիկ աղօթագիրքը՝ «Նարեկը»-ը եւ կը նկատեմ Հայ Ժողովուրդի հոգեւոր սահմանադրութիւնը: Աշխարհ պէտք ունի Գրիգոր Նարեկացիի պատգամներուն» ըսելով աւարտեց իր խօսքը:

Այսօր, յետպատերազմեան այս ժամանակաշրջանին, երբ խոցուած եւ ընկճե-ւած հայութիւնը ցաւի եւ խոր ողբերգութիւն մէջ կ'ապրի՝ առաւել եւս պէտք ունինք մեր Սուրբին պատգամներուն, Անոր «Ի խորոց սրտէ խօսք ընդ Աս-տուծոյ» աղօթքներուն եւ աղերսներուն, որոնք պիտի օգնեն մեզի դուրս գա-լու մեր խորունկ վիշտէն, կորուստներու անթառամ ցաւէն, ստեղծուած վայ-րոյթի, պիրար մեղադրելու, յուսահատութեան, անմիաբանութեան այս բացա-սական մթնոլորտէն: Նարեկացիի աղօթքները մեզի կու տան մխիթարութիւն, հոգիի խաղաղութիւն, համերաշխութիւն, յոյս եւ հաւատք: Այս ճգնաժամին մէջ անոնցմով մենք պիտի յաղթենք բոլոր բացասական երեւոյթները, վերա-հաստատելու համար մեր սերն ու միասնականութիւնը:

Գարշեալ համոզուած ենք, թէ Նարեկացին բոլոր ժամանակներուն հա-մար է: Սրբալիսի պատերազմին յաջորդած ներկայ ծանր իրավիճակին մեր ականատես դարձած անբաղձալի իրադարձութիւնները, հաւաքական կեանքի բոլոր մտահոգիչ երեւոյթները կը համարուին բարոյական տագնապի եւ հո-գեկան անկումի հետեւանքներ: Հոգեւոր վերականգնումն է, որ մեզ պիտի չերբազատէ համապային այս քառսէն: Դէպի Հաւատք, դէպի կրօնի խոր-հուրդ ուղղուելու մեր միտումն ու ջանքերը պէտք է շեշտուին այսօր ապգային-եկեղեցական մեր կեանքէն ներս:

Ներկայի հայ ազգի հորիզոնը պողոր է: Ան պէտք է դուրս գայ այս իրավի-ճակէն իր հայեացքը ուղղելով դէպի հեռաւոր ու նոր հորիզոններ: Այս պիտի ըլլայ բուժումը եւ միայն այսպէս կը սպիանան վերքերը: Ս.Գրիգոր Նարեկա-ցին ընդունակ է մեզ առաջնորդել՝ չերբազատուելու առկա կիրքի բռնկում-ներէն, մարդկային գորշ ու գոռեհիկ մոլուցքներու լլկանքներէն եւ ի վերջոյ իր թողած ժառանգութեամբ մենք կրնանք նկատել այնպիսի սեւեռակետ մը, ուր հոգին ականատես կ'ըլլայ լուսաւոր եւ գերերկրային գեղեցկութեան մը: Այդ գեղեցկութիւնը պիտի ըլլայ այն վեհ գաղափարը, որ պիտի համապատաս-խանէ Աստուծոյ կամ ճշմարտութեան սկզբունքի շողերով լուսաւոր պատկերի մը: Մեզմէ իւրաքանչիւրին էութեան լոյսն է, որ պիտի կազմէ հայ ազգի ջահը ու վայն պիտի դնէ ճանապարհի մը վրայ, որ պիտի հասցնէ անշեղ կատարե-լագործութեան:

Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթագիրքը հայ ժողովուրդի խղճմտանքին ու դատողութեան ամենէն ապահով եւ մաքուր միջոցն է՝ գտնելու համար սփո-փանք, որ կենսական կարիք դարձած է այս պահուն հայութեան համար: Ինչ-պէս Ս. Գրիգոր Նարեկացին կը գրէ. «Ուստի, ամբիժ սրտով բժշկութիւն՝ պարտքերու թողութիւն եւ մեղքի կապանքներէ արչակում: Ո՛վ բարձեալ, Քու արարածներուդ հոգիներուն եւ մարմիններուն ցաւերը բուժելու համար թող կենաց դեղ ըլլայ Քու անունովդ սկսուած ողբերու այս մատեանը»: «Նարեկ»-ը պիտի ըլլայ մեր խոցուած հոգիներու անոյշ բաւասանը եւ իր խորհուրդով պիտի գայ ազգը կապուրելու, վերանորոգելու, վերաշխուժացնելու եւ վերա-կենդանացնելու:

Նարեկացին, աստուածախօս մատենագիրն եւ սուրբ վանականը, հայ ազ-գի պարծանքն է, որ ներկայ ծանր պահուն կրնայ ներգործել՝ հաւաքական սփոփանք պարգեւելու հայութեան: Նարեկացին հանճարեղ ուղղեցոյց մըն է, որ մեզի ցոյց կու տայ Աստուծոյ նկատմամբ անսահման սերը: Իր աղօթքներէն մէկուն մէջ ան կ'ըսէ «Յիրաւ Քու կամքիդ երկայնամտութեան լոյսին մէջ ծածկը-ւեցաւ ամենուն չարութիւնը, ինչպէս դոյզն մտայլ մը՝ արեւու տապին մէջ...»:

Այս օրերուն մթազնած հայկական երկնքի տակ, Ս. Գրիգոր Նարեկացին

Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան

կրնայ դառնալ այն փարոսը, որ մեզ կրնայ առաջնորդել դէպի լոյսը: Ա՛ն կրնայ ըլլալ այն գուլալ աղբիւրը, որ կրնայ սնուցանել աստուածատեսութեան շողիւններով հայ ժողովուրդի ցաւերը փարատելու ջանքերը ու կրնայ լոյս սփռել անոր առկա խաւարին վրայ:



Ս. Գրիգոր Նարեկացին հանճար մըն է, մեծութիւն մը համամարդկային ու համաշխարհային: Ան միայն հայոց չի պատկանիր: Միջապգային մակարդա-կով միստիք գրականութեան մէջ ամենէն սրտառուչ եւ անկրկնելի դէմքերէն մին:

Մէկ անգամ եւս յիշենք Ֆրանչիսկոս Սրբազան Բաժանայապետի խօսքը. «Գրիգոր Նարեկացիի բացառիկ աղօթագիրքը «Նարեկ»-ը եւ կը նկատեմ Հայ ժողովուրդի հոգեւոր սահմանադրութիւնը: Աշխարհ պէտք ունի Գրիգոր Նա-րեկացիի պատգամներուն» վերյիշենք Ֆրանչիսկոս Սրբազան Բաժանայա-պետի վկայութիւնը:

Համոզուած ենք, թէ բոլորէն առաջ, նախ մենք պէտք ունինք Ս. Գրիգոր Նարեկացին խորքաթափանց ընկալելու, իր պատգամները հասկնալու եւ ա-նոնցմով ուղղութիւն տալու մեր թէ՛ անհատական եւ թէ հաւաքական կեան-քին: Ս. Գրիգոր Նարեկացիի պատգամներուն նորովի իւրացումը կրնայ խաղա-ղութեան առաջնորդել հայութեան էութիւնը եւ այդ անդորրին մէջ մեր ազգը կրնայ ամրապնդել հաւատքը սեփական ուժերու նկատմամբ, կրնայ վերանո-րոգող եռանդ գտնել նոր մտայնութիւնով պետականաշինութեան, հայրե-նակերտման լծուելու եւ ի վերջոյ՝ ապագայի նկատմամբ յոյսի հունտեր ցանե-լու, որպէսզի անոնք ծիւ տան նոր սերունդի կատարեալ, լիարժէք կրթութեամբ ու դաստիարակութեամբ եւ օր մըն ալ այդ պտուղները քաղուին հայոց անամպ երկնքին ներքեւ: Միշտ պէտք է յիշենք, որ տասներորդ դարու այս հանճար հայ վարդապետի պատգամները անժամանակ են եւ աւելի խոր ու աւելի բարձր քան արդիական ժողովրդական տարբեր գաղափարախօսութիւններ:

Թող Տէրը լուսաւորէ մեր միտքերը ու խորացնէ մեր մտածումները, որպէս-զի կարողանանք յայտնաբերել Ս. Գրիգոր Նարեկացիի հանճարի խորքերը: Եւ Նարեկացիի «հոգեւոր սահմանադրութեամբ» առաջնորդուինք Բարչրեալն ալ մեզ արժանացնէ յաղթահարել ազգիս բոլոր դժուարութիւններն ու մարտա-հրաւերները:

Հոռն, 4 Մարտ, 2021

Սրբազան Բաժանայապետը Իրաքի մէջ կը դիմաւորուի ասորի աղջնակին կողմէ
Առաջին քահանայապետը որ կ'այցելէ Իրաք՝ ծննդավայրը երեք կրօններու կողմէ
ընդունուած Աբրահամ Մարգարէի:
Բարի օրինակ ներդաշնակութեան եւ համակեցութեան
տարածաշրջանի հաւատացեալներուն





Հ.Բ.Բ.Մ.-ի 91-րդ ընդհանուր ժողովը ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԼ ԱՌՅԱՆՅ ԴՐՈՒԹԵԱՄԲ

27 Փետրուար 2021ին, իր աւելի քան մէկդարեայ պատմութեան ընթացքին, առաջին անգամ ըլլալով, Հ.Բ.Բ.Մ.-ի Երկամեայ Ընդհանուր ժողովը, խախտելով աւանդութիւնը, աշխատանքները կազմակերպեց ամբողջովին առցանց դրութեամբ: Նկատի ունենալով շարունակուող համավարակը, որ արդէն թեւակոխած է իր երկրորդ տարին եւ տակաւին կը շարունակէ թեժ օճախներու չեւոյց պահպանուիլ ամբողջ աշխարհի տարածքին, Հ.Բ.Բ.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովը յօժարեցաւ օգտուիլ առցանց դրութեան ճարտարարուեստներու ընձեռած կարելիութիւններէն՝ հեռավար չեւոյց միաւորելու աշխարհատարած իր անդամակցութիւնը:

Հ.Բ.Բ.Մ.-ի Հայկական Համալսարանին Համալսարանին ընձեռած կարելիութեան շնորհիւ, 32 երկիրներէ հարիւրաւոր մասնակիցներ կրցան միանալ Zoom-ի միջոցով՝ անգլերէնէ հայերէն, ֆրանսերէն եւ սպաներէն համաժամանակեայ թարգմանութեամբ:

«Անցեալ տարի պակասէր ժառանգութեան թանկութիւնը ի վեր Հ.Բ.Բ. Միութիւնը առցանց դրութեամբ կրցաւ ճկունութիւն եւ հնարամտութիւն ցոյց տալ: Այդ առեւտրէն ի վեր մեզի համար պարզ դարձաւ, որ ոչ միայն կրնանք շարունակել մեր առաքելութիւնը, այլ նաեւ աւելի քան երբեք ընդարձակել մեր հասու ըլլալը գաղութներու աւելի մեծ զանգուածներուն, որոնց կը ծառայենք», ըսաւ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Ատենադպիր Սարգիս Ընդլեւեան, որ կը վարէր Ընդհանուր ժողովը:

Ողջոյնի խօսքերէ ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տուաւ իր Օրհնութեան Խօսքը՝ Ընդհանուր Ժողովին մաղթելով յաջող եւ արդիւնաւոր ընթացք, ինչպէս նաեւ շեշտեց Հ.Բ.Բ.Մ.-ի կարեւոր դերը հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Ինչպէս միշտ, պաշտօնական օրակարգը կ'ընդգրկէր 2018-2019 տարեշրջանի ընդհանուր նիստական տեղեկագրութիւնը, զոր ներկայացուց Հ.Բ.Բ.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի Գանչապահ Նապարէթ Ֆրսթըքճեան եւ նոյն տարեշրջանի բարոյական տեղեկագիրը Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Փոխ-ատենադպիր Արտա Յարութիւնեան: Կրթութեան ասպարէզին մէջ Հ.Բ.Բ.Մ.-ի կատարած աշխատանքը, մանաւանդ Հայկական Համալսարանին Համալսարանի հսկայական ներդրումը հայ կրթութեան մէջ, հիմնադրումն է ի վեր անցնող տասը տարիներու ընթացքին, ներկայացուց Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Լենա Սարգիսեան: Կարճ հարց ու պատասխանին յաջորդեց քննարկում հարցերու շուրջ, զորս նախքան Ժողովը ներկայացուած էին անդամներու կողմէ:

Գովասանքի խօսքեր ըսուեցան Հ.Բ.Բ.Մ.-ի երեք խումբերու հասցէին, որոնց մասին Միութեան նախագահ Տիար Պերճ Սեդրակեան հպարտութեամբ խօսեցաւ՝ վեր առնելով ժամանակի եւ փորձառութեան անոնց անբեւեալացի կոհողութիւնը 2020ի ճակատագրական պահերուն: Այդ խումբերուն մէջ էին Հ.Բ.Բ.Մ.-ի Լիբանանի Զրջանակային Յանձնաժողովը եւ անոր Ատենապետ Ժերար Թիւֆէնքճեանը եւ Հ.Բ.Բ.Մ.-ի լիբանանեան ամբողջ կառոյցը, որոնք անգամ մը եւս գնահատեցին իրենց քաղաքացիական ներգրաւածութիւնը լիբանանեան կեանքէն ներս, անցեալ տարուան Օգոստոսին Պէյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած պայթումէ ետք: Նախագահ Սեդրակեան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Հ.Բ.Բ.Մ.-ի աշխարհատարած մասնաճիւղերու սկաւտներուն, իրենց քրտնաջան աշխատանքին եւ ցոյց տուած համայնքային ծառայասիրական ոգիին համար, անբեւեալացիութիւնը դժնդակ ժամանակներուն, երկրէն ներս թէ աշխարհի տարածքին: «Մենք երջանիկ

ենք, որ անոնք կը կրեն Հ.Բ.Բ.Մ.-ի կրծքանշանը եւ մեզ այդքան լաւ չեւոյց կը ներկայացնեն», նկատեց Սեդրակեան, որ ինք նոյնպէս անցեալին սկաւտական շարժման առաջնորդ եւ ղեկավար եղած է: Վերջապէս, յատուկ յիշատակուեցան Հ.Բ.Բ.Մ.-ի Երիտասարդ Արհեստավարժներու խումբերը, որոնք համաճարակի բռնկումին ընթացքին դրսեւորեցին առաջնորդութիւն ստանշանելու իրենց կարողութիւնը, նախադրեցին կերպով գտնելով հաղորդակցութեան մէջ մնալու միջոցներ, ինչպէս նաեւ ապահովելով աշխատաժողովներ կարեւոր հարցերու շուրջ ժամանակին միտքերու փոխանակութիւն կատարելու:


Իր պաշտօնական երկամեայ ուղերշին մէջ նախագահ Սեդրակեան անկեղծօրէն ընդունեց, որ Հ.Բ.Բ. Միութեան տպաւորիչ յաջողութիւնները եւ նուաճումները 2018-2019 տարեշրջանին դժբախտաբար շուտով ստուերի տակ պիտի մնային 2020ին տեղի ունեցած տագնապներու պատճառով: Ան ընդունեց, որ այս աղետները անհրաժեշտ դարձուցին առաջնահերթութիւններու լուրջ փոփոխութիւններ դէպի հրատապ մարդասիրական օգնութիւն, ասպարէզ մը, որուն մէջ Հ.Բ.Բ. Միութիւնը շատոնց փայլած է իր տպաւորիչ եւ վըստահելի հեղինակութեամբ:

Նախագահ Պերճ Սեդրակեան առիթը օգտագործեց մասնակիցներուն յիշեցնելու հայ ժողովուրդի պատմութեան բազմաթիւ շրջադարձային հանգրդանները, ուր Հ.Բ.Բ.Մ.-ը կենսական դերակատարութիւն ունեցած է հայկական պետականութեան կերտումին մէջ՝ սկսելով Հ.Բ.Բ.Մ.-ի հեռատես Հիմնադիր Նախագահ Պօղոս Նուպարի կարեւոր գործունէութենէն՝ 20-րդ դարու նախաշեմին Համիտեան Թուրքիոյ աղքատացած եւ ճնշուած հայկական համայնքներու կրթութեան, ինչպէս նաեւ դէպի նորաստեղծ Սորիիդային Հայաստան հայութեան ներգաղթի կազմակերպման միջոցով: Ան վկայակոչեց իր նախորդներուն կողմէ առնուած կարեւորագոյն որոշումները, ինչպէս օրինակ՝ Ալեք Մանուկեանի կոչը սատարելու Սուրբ Էջմիածնին որպէս Հայ Սկեղեցոյ կեդրոն եւ Լուիս Սիմոնի ճիգերը ուղղուած Հայաստանի Ամերիկեան Համալսարանի հիմնադրութեան 1991ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան նուաճումէն կարճ ժամանակ յետոյ:

Տեղեակ ըլլալով ներկաներու ամփոջական մտահոգութիւններուն, նախագահ Սեդրակեան ընդհանուր գիծերով ներկայացուց, թէ ինչ կը նախատեսէ Հ.Բ.Բ. Միութիւնը Հայաստանի հետագայ յառաջընթացին ուղղութեամբ: «Հ.Բ.Բ.Մ.-ի ղեկավարութիւնը, մեկնելով մեր ազգին առջեւ ծառայած վտանգներու մասին լուրջ մտահոգութիւններէն, միաւորուելու կոչ ըրած է համայն հայ ժողովուրդին, որպէսզի բոլորը իրենց փորձառութիւնը, ներգրաւածութիւնը եւ անկոտրում կամքը ներդնեն կառուցելու ապագան անցեալ տարուայ իրադարձութիւններէն յետոյ», ըսաւ ան:

Նախագահ Սեդրակեան իր խօսքը եզրափակեց գալիք տարիներու լաւատեսական, բայց նաեւ վուսպ տեսլականով մը: «Մենք վստահ ենք, որ Հ.Բ.Բ.Մ.-ը կրնայ համահայկական առումով կարեւոր դեր խաղալ մեր ազգին առանցքը ամրապնդելու առաքելութեան մէջ՝ իր հայրենիքով եւ Սփիւռքով: Ատոր համար չեզմէ կը պահանջուի իւրաքանչիւրիդ եւ բոլորին մասնակցութիւնը, քանի որ միայն միասնաբար կրնանք հասնիլ ազգային բարգաւաճման եւ կայունութեան, որուն խորապէս կը ցանկանք տեսնել»:

**Նախագահ Սեդրակեանի ամբողջական ելոյթը, ինչպէս նաեւ Ընդհանուր ժողովի կողմէ ընդունուած որոշումները կրնաք տեսնել այս հաղորդակցութեան կից www.agbu.org կայքէջի վրայ:*



Կո՛չ Հայրենի Քաղաքական Աւագանիին



Խոր անձկութեամբ եւ յուզումով կը հետեւիք Հայաստան Աշխարհի Ներկայ ճգնաժամային անցուղարձերուն եւ իրարամերժ ոգիով արտայայտուած քաղաքական միտքերուն եւ ուղղութիւններուն: Իրազեկ ենք այն իրողութեան, որ արդարօրէն պատասխաններ կը փնտռուին ոչ միայն Արցախեան վերջին պատերազմի մասին, այլ նաեւ անցնող քառորդ դարու ապահովութեան, պաշտպանութեան եւ դիւանագիտական ծալքերու մէջէն ի յայտ եկած ձախողութիւններուն համար:

Համոզուած ենք, որ Հայրենիքը պէտք ունի վստահութիւն ներշնչող իշխանութեան մը, որ իր ուղին գտնէ երկրի սահմանադրութեան պարագիծին մէջ ակօսուած օրէնքի ճանապարհով:

Ի տես Հայաստանի խաղաղութեան սպառնացող Ներկայ վտանգին եւ համազգային բնոյթ ունեցող քաղաքական այս տագնապին, այսու, կոչ կ'ընենք բոլոր կողմերուն յանուն հայրենիքի եւ հայ ազգի գերագոյն շահերուն մէկդի դնել տարբերութիւնները եւ հաւաքուիլ սեղանի մը շուրջ տնօրինելու արտակարգ ընտրութիւններու շուրջ համաձայնուած ծրագիր մը:

Ի բոլոր սրտէ կ'աղօթենք, որ հայրենի պետական եւ կուսակցական ղեկավարները իրենց քաղաքական իմաստութիւնը գործածեն ի սեր Հայաստանի անդորրութեան եւ խաղաղութեան:

Վեր. Վահան Յ. Թութիկեան, Գործադիր Տնօրէն
Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդ

Չաւէն Խանճեան, Գործադիր Տնօրէն
Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւն

Մարտ 2, 2021

ԼՈՅՍ ՏԵՍԱԿԻ ԵՐՈՒԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆԻ «ԽԱՂԱՂ ՏՈՂԵՐ» ՅՕԴՈՒԱՍՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մեկենասութեամբ «Փինիկ» մարդկային ոյժերի վարգաւան համահայկական հիմնադրամի: Տպագրութիւն՝ Երեւան, «Չանգակ-97»: Ժողովածուն կ'ընդգրկէ արուեստաբան հեղինակի՝ հիմնականին մէջ 2000 թուականէն յետոյ տպագրուած գրականագիտական եւ արուեստաբանական յօդուածները, որոնց կարեւոր մէկ մասը հրատարակուած է «Ազգ» թերթի էջերուն մէջ:

567 էջ ծաւալով, լաթակապմ, ճաշակով տպագրուած հատորը օժտուած է տարբեր արուեստագետներու սեւ ու գունաւոր լուսանկարներով:

Կը շնորհաւորենք «Պայքար»ի մնայուն աշխատակիցը:



ՓԱՆ ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՄԵՆՏԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(Ծառունակուած նախորդ թիւէն)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՎԱՐՈՂԵՍ ԳՈՐԴՈՒՄԵՆ

Երբ Փան Թուրանական Կայսրութիւնը վերջնականօրէն հաստատուի, Հայաստանը իր 3,000,000 բնակչութեամբ այս հսկայական իսլամ ուկրաինոսին մէջ պիտի նաւարկէ ... : Սակայն, եթէ մեր կարկինը քիչ մը ես լայն բանաւր, պիտի տեսնենք որ այս Փան Թուրանական Կայսրութեան դրացի իսլամ երկիրներն ալ բարեկամական սերտ կապեր հաստատած են եւ պիտի հաստատեն եւ վստահաբար պինակցին այս Թուրանական Կայսրութեան հետ, քանի որ այս՝ հսկայ, շատ հզօր բանակով եւ տնտեսապէս անսահման կարելիութիւններ ունեցող կայսրութիւն մը պիտի ըլլայ:

Որո՞նք են այդ երկիրները, իրենց բնակչութեամբ.

Փաքիստան	217,000,000
Աֆղանիստան	40,000,000
Իրան	85,000,000
Իրաք	40,000,000
Սուրիա	19,000,000
Յորդանան	11,000,000
Եգիպտոս	99,000,000
Սաուտի Արաբիա	35,000,000
Գումար	544,000,000
Ընդ. Գումար	715,000,000

Տակաւին չեմ խօսիր Ափրիկեան իսլամ երկիրներու, Պանկլատէշի, Ինտոնէզիոյ եւ այլ մահմետական երկիրներու բնակչութեան մասին: «Քրիստոնեայ» Եւրոպայի մէջ ալ Մահմետականներու թիւը սկսած է ահագնօրէն աճիլ: Աշխարհի իսլամ բնակչութեան թիւը 2018-ին՝ 2.14 միլիարդ էր:

Այս քարտէսին վրայ կը տեսնէ՞ք ուր է Հայաստանը ...

Չինաստանի մէջ 60-80 միլիոն իսլամներ կան: «Հուի» իսլամները թիւով ամենամեծ խումբն են, սակայն Քինճիանկ (Xinjiang) նահանգին մէջ ամենաշատ Ուայկուր իսլամ բնակչութիւնը կ'ապրի, որոնք, ըստ ումանց, հալածանքներու կ'ենթարկուի Համայնավար պետութեան կողմէ:

Ռուսիոյ 150,000,000 բնակչութեան 20,000,000-ը իսլամներ են: Ինչպէս վերը յիշեցի, 15 տարի ետք, Ռուսիոյ բնակչութեան մէկ երրորդը իսլամներ պիտի բաղկանայ (ներկայի համեմատութեամբ՝ աւելի քան 50,000,000):

Ռուսիոյ ներկայի կառավարութիւնը տրամադիր է Փան Թուրանական Կայսրութեան հետ ոչ միայն «բարի դրացիական» յարաբերութիւններ մշակել, այլ նաեւ անոր մէկ կտորդ անդամը ըլլալ: Արդէն երբ իր բնակչութեան մէկ երրորդը իսլամներ բաղկանայ, անոնք պիտի ստիպեն Ռուսիոյ որ միանան այդ Փան Թուրանական Կայսրութեան:

Կը մնայ Չինաստանը: Այս Փան Թուրանական Կայսրութիւնը, շուտով պիտի սկսի գլխու ցաւ պատճառել եւ սպառնալ Չինաստանին:

Փետրուար 1-12 Կարսի մէջ տեղի ունեցան Թուրքիա-Ատրպէյճան-Փաքիստան պինավարժութիւնները, որոնք յարչակողական բնոյթ ունէին եւ միտաւ ինչ, բնականաբար, Ռուսիոյ եւ Հայաստանի դէմ (Փաքիստանը ինչ գործ ունի Թուրքիոյ հետ պինավարժութիւններ կատարելու Հայաստանի սահմաններուն մօտ, Ռուսական պինուորական խարխախին ճիշդ դիմացը ...): Փաքիստան իր բանակայինները եւ աթոմական ռումբերը կրնայ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի տրամադրութեան տակ դնել, ի դիմաց քանի մը տասնեակ միլիոն տուրքներու:



Տակաւին վերջերս, Սեպտեմբեր 4, 2019-ին, Թուրքիոյ նախագահ Էրտողանը Թուրքիոյ Խորհրդարանին մէջ յայտարարեց որ «կարգ մը երկիրներ աթոմական ռումբերով հրթիռներ ունին, բայց մեզի կ'ըսեն որ մենք չենք կրնար անոնցմէ ունենալ: Այս, ես երբեք պիտի չընդունիմ: Աշխարհի մէջ ոչ մէկ պարզապէս երկիր կայ որ աթոմական

ռումբերով հրթիռներ չունի: ...Բայց երբ հարցը մեզի գայ, «դուք պետք չէ ունենաք» կ'ըսեն»: Հաւանաբար յաջորդ տասնամեակին Թուրքիան ալ աթոմական պէնքերով պիտուած ըլլայ: Արդէն Փաքիստանը, Թուրքիոյ ամենամտերիմ բարեկամ-դաշնակիցներէն մէկը (միակ երկիրը որ Հայաստանի Հանրապետութիւնը չէ ճանչցած), աթոմական ռումբեր չինելու գիտութիւնն ու կարողութիւնը ունի: Ինչո՞ւ Թուրքիոյ պիտի չծախէ իր ռումբերէն եւ մանաւանդ՝ աթոմաշինութեան գիտութիւնը եւ միջոցները: Կրնա՞ք երեւակայել: Փան Թուրանական Կայսրութիւնը, այն ժամանակ շուրջ 200,000,000 բնակչութեամբ, դաշնակցութեամբ ուրիշ 350 - 500,000,000 իսլամներու, պինուած հարիւրաւոր աթոմական ռումբերով, քարիւղի անսպառ պահեստներով, գերարդիական պինուորական կազմաձևերով, ինչ ահուելի ուժ պիտի ներկայացնէ: Կը կարծէ՞ք որ Ռուսիան Փան Թուրանական Կայսրութեան դէմ դնելու կամ անոր դէմ պատերազմելու կամքը պիտի ունենայ:

Թուրքիոյ նախապատրաստական աշխատանքներէն մին ալ՝ թրքական համալսարաններու քայ դոներն են: Թուրքիան, վերոյիշեալ եւ այլ իսլամ պետութիւններէն (հաւանաբար նաեւ Հայաստանէն), լման կրթաթոշակով, սնունդով եւ կեցութեամբ կ'ապահովէ որեւէ աշակերտի որ կը փափաքի Թուրքիոյ համալսարաններէն մին յաճախել: Արդէն իսկ տասնեակ հազարաւոր աշակերտներ շրջանաւարտ եղած են, մինչ տասնեակ հազարաւորներ ալ այս օրերուն իրենց ուսումն ու «հոգեկան սնունդ»ը կը ստանան թուրք քարոզչական մեքենայէն:

Քաղաքական քայ գաղտնիք է որ Ամերիկան եւ Եւրոպան (ՆԱՌՕ-ն) Թուրքիոյ ամէն տեսակի իրաւունք տուած են Ռուսիան զսպելու եւ զբաղուած պահելու Միջին Արեւելքի եւ Կովկասի մէջ: Իրենց շահերը այդ կը պահանջեն: Քանի մը տասնեակ հազար հա՞յ պիտի մեռնի, so what! Եթէ Երկրորդ Յեղասպանութիւնը կատարուի, բնականաբար Հայաստանը աշխարհի քարտէսէն պիտի սրբուի - «շատ կը ցաւինք», «հայերը շատ լաւ ժողովուրդ էին», «ոճրագործներ պատասխան պիտի տան» ... եւայլն պիտի յայտարարեն «մեծ» պետութիւնները: Ինչ կարելիութիւն ունի եթէ Հայ ժողովուրդն ու Հայաստանը ցեղասպանուած եւ աշխարհի երեսէն սրբուած ըլլան քայց որպէս պատիժ 20,000,000 իսլամներ մահուան դատապարտուին (Հայոց Յեղասպանութենէն ետք քանի՞ թուրք մահուան դատապարտուեցաւ ...): Տակաւին երկուքուկէս միլիարդ իսլամ (100,000,000 թուրքերով ...) կը մնայ աշխարհի վրայ, իսկ հայե՞րս ... :

Կը կարծէ՞ք որ Չինաստանը պատերազմ պիտի սկսի Փան Թուրանական Կայսրութեան դէմ: Նոյնիսկ Հնդկաստանը, որ Փաքիստանի ռիսկէն թշնամի է, քանի մը անգամ պիտի մտածէ Փաքիստանի դէմ պատերազմելու Քաշմիրի հարցով: Իսկ Փան Թուրանականներու դէմ, ինչո՞ւ պատերազմի, հայերո՞ւս համար:

Միջերկրական Ծովու արեւելեան ափի քարիւղի հարցով երբ Թուրքիան ոտնչգութիւններ կը կատարէր, Լիպիա բանակ կը տեղադրէր, Իսրայէլը, Յունաստանը, Ֆրանսան, Եգիպտոսը եւ Կիպրոսը բողոքեցին: Ֆրանսան եւ Եգիպտոսը սպառնացին պինու ոյժով պատժել Թուրքիան: Արցախեան պատերազմէն ետք երբ Թրքական «Պայրաքտար» ԱԹՍ-ները (տրօն) իրենց կարողութիւնը ցուցադրեցին, Ֆրանսան եւ Եգիպտոսը, ինչպէս նաեւ Յունաստանը «նախընտրեցին» բանակցութեամբ հարցերը լուծել եւ անոյշի կապել: Կիպրոսը՝ ... : Խեղճ Կիպրոս:

Եթէ Թուրքիան պատերազմ սկսի Հայաստանի դէմ, կը կարծէ՞ք որ այն դաշնութիւնը որուն մաս կը կազմեն Հայաստանը, Ռուսիան եւ քանի մը իսլամ- թուրքիկ պետութիւններ (Հաւաքական Ապահովութեան Պայմանագրի Կազմակերպութիւն - Հ.Ա.Պ.Ա.), Հայաստանը պաշտպանելու համար պիտի պատերազմին իսլամ Թուրքիոյ դէմ ... : Բայց Հ.Ա.Պ.Ա.-ի եւ Թ.Պ.Հ.Ա.Ս.-ի մաս կազմող երկիրներէն շատերը նոյնն են: Ինչո՞ւ, Հայաստանի՞ համար այս երկու դաշնակցութիւններու նոյն պետութիւնները իրարու դէմ պիտի պատերազմին: Այս ի՞նչ «բարատոքս» է: Բոլորը պիտի բռնկաւորուին (առանց «Թաւիշ»ի) Հայաստանը քարտէսին վրայէն սրբելու:

Այս հսկայ, անձայրածիր իսլամ փոթորկոտ ուկրաինոսին մէջ Հայաստանը առանչին է: Օ՛ր ոչ, Արցախը կայ, հաւանաբար կրնանք Արցախցիներուն վստահիլ (ինչպէս Անդրանիկ Փաշան անոնց վստահեցաւ 1917-ին, Էրզրումի մէջ...): Կայ նաեւ Վրաստանը, որ 1918-ին, երբ Հայաստանի շուրջ 750,000 բնակչութիւնը սովամահ կ'ըլլար, Ամերիկայէն գացած օգնութեան յիսուն տոկոսը վար դրաւ որպէս «թրանսպիթ տուրք», իսկ վերջին պատերազմին ալ չ'արտօնեց Ռուսիոյ Վրաստանի օդային տարածքներէն Հայաստանին օժանդակութիւն հասցնելու: Վստահի՞նք «քրիստոնեայ» Վրաստանին: Կ'ըսեն որ Պաթումի բնակչութեան 75 տոկոսը թուրքեր են (բայց անոնք «լաւ թուրքեր» են ...): Պարսկաստա՞նը ... Արցախի պատերազմի ժամանակ որո՞նի ի նպաստ արտայայտուեցան կրօնական եւ քաղաքական ղեկավարները եւ զո՞վ շնորհատրեցին «գրաւուած տարածքները ապատագրելուն» համար:

Եւ մենք, հայերս, ի՞նչ կ'ընենք այս օրերուն: Չափազանց զբաղուած ենք պիրար բզկտելով: Չիրար յօշոտելով: Իմացանք որ 17+ կուսակցութիւններ կան եղեր Հայաստանի մէջ: 3,000,000 խեղճ ու կրակ ժողովուրդ, քանի մը տասնեակ պիրար չ'հանդուրժող կուսակցութիւններով, իրարու դէմ պայքարելով, ան ալ ամենա-աղտոտ կերպերով, կը փորձեն հայրենիք կերտել: Ինչո՞ւ Ամերիկան կամ Եւրոպան կամ Ռուսիան, կամ Չինաստանը, կամ որեւէ այլ երկիր պիտի ուզէ նման ժողովուրդի մը օգնել:

Նայեցէք մէջ մը մեր պետութեան, կառավարութեան ապիկարութեան, պաշտօնութեան, ընդդիմութեան մակարդակներուն, դատարաններուն արդարադատութեան մակարդակին, թալանիչներուն, կաշառակերներուն, կրթութեան ողբերգական մակարդակին, ազգային ոգիի անկման, ազգային աւանդութիւններու անտեսման, մշակոյթի օտարապման, օտար սպասարկութիւններու ազդեցութեան, սորոսականներուն, աղանդաւորներուն, մանկավաճառութեան եւ մարմնավաճառութեան, սեռային ապականութեան, միասեռականներուն, բազմասեռականներուն, կղերականներու հանդէպ յարգանքի չգոյութեան, թրքական ապրանքներուն ճոխութեան՝ Հայաստանի շուկային վրայ, բանակին 80-ականներու պինտիւնիկային, բանակին խեղճութեան, դիմատետրերուն մէջի գրութիւններու մակարդակին եւ ճոխ հայիոյանքներուն, հայերէն լեզուի աղճատումին, հայոց պատմութեան թրքական չափանիշներուն, անհանդուրժողականութեան, նախանչին, Հայաստանը վերջնականօրէն լքել ուզող յուսալսաք եւ յուսահատ զանգուածներուն, եւայլն, եւայլն եւայլն: Եւ մենք, այս խեղճութեամբ, ինքնահաւանութեամբ կը ժպրիինք ասպարէզ կարդալ Թուրքիո՞յ:

Ե՞րբ պիտի արթննանք: Ե՞րբ պիտի սթափինք:

Ե՞րբ պիտի սկսինք խելքով կամ ուղեղով մտածել մեր ապագային, մեր ինքնապաշտպանութեան, մեր վաւակներուն եւ թոռնիկներուն մասին:

Փնտռենք եւ գտնենք մեզի բախտակից եւ բարեկամ ազգեր, պետութիւններ եւ պինակցինք անոնց հետ - (Ռուսիա (?), Չինաստան, Հնդկաստան, Ֆրանսա, Յունաստան, Պուլկարիա, Եգիպտոս, Սուրիա, Իրաք, Սէուտի Արաբիա, Միացեալ Էմիրութիւններ, Սերպիա, ... Կիպրոս, եւայլն) եւ միասնաբար մեր ինքնապաշտպանութիւնն ու «ապագան» ծրագրենք:

Եթէ կ'ուզենք տակաւին ապրիլ որպէս ԱԶԳ, շատ ժամանակ չունինք վատնելու:

L.nu Անճելըս

(Ծար. 2 եւ վերջ)

Հրապարակության Վարձով

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ. ՏԵՍԻՆՔ ԹԷ՝ ՊԱՏՐԱՆՔ, ՀԱՒԱՏՔ ԹԷ՝ ՑՆՈՐՔ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂԱՅԱՆ

Հայաստանի մէջ, յամառօրէն եւ անդուլ կերպով կը շարունակուին ապակա-
յունութեան, անհանդուրժողութեան, հանրահաւաքային տրամադրութիւններն
ու ցուցարարութիւնները, առանց հասնելու համախոհութեան մը կամ հասկա-
ցողութեան մը:

Գործող իշխանութիւնները կը շարունակեն իրենց կառավարական աշխա-
տանքները, տեղ մը ՄԱՍՆԱԿԻ յաջողութիւններով, ուրիշ տեղ մը, ՈՐՈՇ յա-
ռաջընթացով, իսկ ընդհանրապէս ԿԱՂՆԻԿԱՂ :

ԸՆդդիմութիւնը, որ ուռուցիկ ու պայթուցիկ լուրնագներով եւ ելոյթներով,
խոռոնեւրամ դառնալու յաւակնութիւններով հանդէս կու գար, այսօր, չի գտնը-
ւիր այդ հարթակներուն վրայ, ընդհակառակը՝ բացայայտօրէն նահանջի մէջ է
եւ կորսուած վիճակ մը կը ներկայացնէ 16 կուսակցութիւններու» համախմբու-
մը վերածելով լոկ անունի մը, թոյլ ու վտիտ ներկայութեամբ:

Այդուհանդերձ, հայաստանցի ժողովուրդը, որ ոչ անցեալին եւ ոչ ալ ներկա-
յիս, հաւատք ու վստահութիւն ունի քաղաքական կամ քաղաքականացած կապ-
մակերպութիւններուն վրայ, այժմ, աւելի քան համոզուած է իր իրաւունքները
պաշտպանելու, մասնաւոր Արցախեան գոյամարտէն ետք, պետք չունենալով
անոնց, քանի ինք կրնայ կամ ինք պիտի շարունակէ հետապնդել իր պահանջ-
ները:

Ի տես այս անքնական եւ անսովոր վերիվայրումներուն, հայ ժողովուրդը, ի
Հայաստան թէ Սփիւք, անշկութեամբ ու խոր մտահոգութեամբ կը հետեւի
յամեցող ու բռնկող պարգայումներուն, հարցադրելով թէ՝ մինչեւ ե՞րբ կրնայ
շարունակուիլ այս անտանելին եւ անգսպելի վիճակը կամ ինչպե՞ս կարելի
պիտի ըլլայ դուրս գալ այս մաշեցնող ոլորապտոյտներէն:

Սակայն, կը թուի թէ, ոչ մէկ կողմ համաչայն է «չիւնհալ»ի մը յառաջացու-
մին, վախճալով իր պարտութենէն եւ կամ՝ մինչեւ վերջ պաշտպանելու իր
թեզը, առանց անդրադառնալու (կամ անդրադառնալով), որ հայրենիքը
սկսած է հիմնովին վտանգուիլ, դէպի անորոշութիւն առաջնորդելով ինքզինք:

Չարմանալի թէ ոչ, վարմանալ թէ ոչ, այս բոլորը ԿԱՐՕՐ իրականութիւն են
եւ հայութիւնը, իր պատասխանատու մարմիններով՝ աշխարհական թէ եկե-
ղեցական, քաղաքական թէ կուսակցական եւ, առ հասարակ, տակաւին լրջօրէն
ու զգաստօրէն այս ՀԱՄԱՕՐԱԿԱՐԳը նժարի վրայ չդրաւ, բացի հոսկէ ու
հոնկէ հնչած «բարեկամեցողութիւններէն», որոնք ի՞նչ կրնան ընել (կամ ի՞նչ
ըրին ցայսօր), երբ քաղաքականօրէն հակամարտ կողմեր, չեն ընդունիր որեւէ
վիջումի երթալ, աւելի լարելով յարաբերութիւնները, աւելի սրելով կացութիւն-
ները, աւելի իրարու թշնամանալով եւ աւելի պիրար ամբաստանելով:

Դատապարտելի այս խառնիճադանճին դիմաց, Արցախեան հիմնահարցը,
եթէ ոչ անտեսուած կամ մոռցուած, բայց, անպայմանօրէն կը գալարուի իր
ցաւերուն ու տագնապներուն մէջ:

Ծիշդ է, որ աւելի քան ՅԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ արցախցիներ վերադարձած են
իրենց բնակարանները, հողամասերը եւ օճախները, բայց, անոնց կողքին, նոյն-
քան թիւով արցախցիներ կը մնան «անտէր եւ անտուն», որովհետեւ իրենց
սեփականութիւնները բռնագրաւուած են, կողոպտուած ու հրկիպուած:

Այս մասին ի՞նչ կ'ընեն ու կը մտածեն պատկան կողմերը եւ նոյնիսկ ժողո-
վրդային լայն խաւեր, երբ անոնց մեծ մասը կ'անուած է ներքին բախումներու
եւ զկուելի ասեկոսներու մէջ:

Հարցը միայն արցախցիներուն օգնելու պատրաստակամութիւնները չեն,
տնային ու կենցաղային, դրամանշային ու վարկային առումներով, ինչ որ, ան-
շուշտ, կարելոր են, այլ՝ գլխաւորաբար, ի՞նչ կարգավիճակ կը սպասուի Ար-
ցախին, հիմակուրնէ մինչեւ հինգ տարի, եթէ հաւատք ընծայուի այս ժամանա-
կաշրջանին:

Իսկ ինչպե՞ս կարելի է Արցախցին համոզել, որ Արցախի ամբողջական ՀԱՅ-
ԿԱԿԱՆԱՑՈՒՄԸ ու ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐԱՑՈՒՄԸ կրնայ ըլլալ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ,
երբ Հայաստանի մէջ, իշխանութեան տիրանալու համար, պատրաստ են ամեն
ինչ զոհելու եւ, իբր թէ, յետոյ մտածելու անոր ապահովութեան մասին:

Այս շինծու պաշտօնի դիմաց, մտածելու իրաւունք չունի՞ ո՞րեւ հայ, տեսնե-
լով այն գահավիժումը, որուն մատնուած է հայութիւնը, մինչ մեծ մասը կը խօ-
սի հայրենիքի փրկութեան մասին, բայց, զայն կը խոցոտէ, ուրիշ մաս մը՝ ժո-
ղովուրդը կը վկայակոչէ, բայց, կը շահագործէ զայն:

Այս քառսային հակակարգէն ու հակավիճակէն, ինչպե՞ս կ'անկնկալուի որ
հայութիւնը դուրս գայ դէպի անդունդ տանող ուղիներէն:

Ո՞վ կրնայ օգնել Հայաստանին ու հայութեան:

Պահ մը բացառենք օտարը (որուն մեծ մասն ալ աղէտ դարձաւ հայութեան,
անցեալին թէ ներկայիս), իսկ սփիւռքահայութիւնը, որ անցնող երեսուն
տարիներուն, ճիշդ է, մեծ ներդրումներով ու նպաստներով հանդէս եկաւ, բայց,
առանց ԾՐԱԳՐԱՌՈՐՈՒՄԻ, ԴԱՍԱՌՈՐՈՒՄԻ ու ԿԱՐԳԱՌՈՐՈՒՄԻ, իսկ
հիմա՞, ան կրնա՞յ նոյն ոճով եւ եղանակով, Հայաստանին չեռք երկարել, այն-
քան ատեն որ՝ նայսկին չեւով չի կրնար (եւ իրաւունք չունի) նոր եւ յաւելեալ
գործնական կողմնորոշ ու բազմագլխացած վիճակին մէջ, արդեօ՞ք կարելի է
նման... արկածախնդրութեան դիմել:

Ակնյայտ է, այլեւ՝ հաստատուած, հայելիի յստակութեամբ, որ Հայաստանը
(նաեւ Արցախը) չի կրնար իր լինելիութեան եւ Էութեան հարապատութեամբ,
մնալ պատնէշի ու պատուանդանի վրայ, երբ բացակայ են՝ համախոհութեան ու
համակեցութեան, հպօրութեան ու զօրակցութեան ամրակուր թեւերը:

Այս խաւարին ու մշուշապատման մէջ, ոչ մէկ ճիշ լուեցաւ կամ կեցուածք
արտայայտուեցաւ, որ կրնար նուազագոյն չափով նպաստել, Հայաստանը դուրս
բերելու իր խորխորատէն ու վիրապէն, գէթ տրամաբանական կամ յուսադրա-
կան հաւանականութիւններով:

Ի վերջոյ, կարելի՞ է «Նիկոլը վարչապետ» կամ «Նիկոլը դաւաճան» խժա-
լուր վանկարկութիւններով, ամբողջ հրապարակները ողողել, համաքանցերը

գրգռել (եւ ինչպիսի՜ գոեհկաբանութիւններով), ի՞նչ ընելու համար, ի բացա-
կայութիւն, յստակ, ողջունելի ու գնահատելի տարբերակներու, որոնց շուրջ
համախմբուիլը՝ իշխանամետ եւ ընդդիմադիր կողմեր, կարենային բան մը...
«ծնանել»:

Չեղան առոնք եւ, կարծես թէ, պիտի չըլլան, որովհետեւ «հակամարտող»
կողմերը (ի՞նչ անամօթութիւն եւ ի՞նչ ստորութիւն), իւրաքանչիւր իր եսէն եւ
իր հաշիւներէն մեկնելով, ինքզինք կը նկատէ անսխալական եւ կամ... ախոյեան:

Սակայն, որո՞ւ հաշւոյն, հայրենիքի՞ն, այն հայրենիքին, որ հայութեան վեր-
ջին եւ անփոխարինելի «պատառիկ»ն է, զոր պահպանելու փոխարէն, այսօր
զգուրջօրէն կայ, իսկ յանուն ինչի՞, հայրենասիրութեա՞ն, իշխանապօրութեա՞ն,
հայրենապահպանութեա՞ն, երբ անդին, այս թափափածութեանց եւ ամբարտա-
ւանութեանց պատճառներով, Արցախ կը նուաճուի, իսկ թշնամին քմծիծաղով
կը հետեւի հայերուն պիրար բզքտելու ու չէզոքացնելու ներքաղաքայիական
ճամարտակութիւններուն ու պոռոտախօսութիւններուն:

Այդուհանդերձ, այս եւ այլ նկատառումներով, մեր ուշադրութիւնը գրաւեց
Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի յատկանշա-
կան մէկ ուղերձ-կեցուածքը, որ տիրող այս փշոտ իրադրութենէն դուրս գալու
իր ազգային-քաղաքական աշխարհայեացքը կը ներկայացնէ:

Նախագահ Արմէն Սարգսեան, իր գրութիւն-ելոյթը խորագրած է՝ «ՉՈՐ-
ՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ», որպէս տեսիլք եւ իրագործում:

Դժբախտաբար, այս մասին, ոչ Հայաստանը, ոչ ալ Սփիւքը, անհրաժեշտ
լրջութեամբ արչագանգեցին, ոչ ալ համապատասխան առարկայականու-
թեամբ վերաբերուեցան:

«Ինչու»ին պատասխան փնտոելը կրնայ երկար տեղ տանիլ, սակայն, մէկ
բան պարզ է, որ նախագահ Արմէն Սարգսեան, անշահախնդիր, անվիճելի եւ
անխորտակելի վճռականութեամբ, փորձեց դուրս բերել հայրենիքը դէպի նոր
կացութեան մը՝ տիրող վիճակներէն, քանի ան այլեւս դարձած էր աւելի քան
աղիտաբեր ու վտանգաւոր, միանգամայն:

Կատախարք կարելի է ըսել, թէ Պրն. Նախագահը, իր «Չորրորդ Հանրա-
պետութիւն» յորջորջումով եւ ընտրութեամբ, ոչ միայն ճիշդ ու տեղին բնորո-
շում-կողմնորոշումով հանդէս եկած է, այլեւ՝ ցոյց տուած, որ Հայաստանի
համար, վերջին երեք տասնամեակի ՆԵՄԱՕ ու ՓՏԱՕ կարգուսարքէն դուրս
գալու ժամանակը հնչած է՝ նոր անցումով, դէպի ԻՍԿԱԿԱՆ եւ ԻՐԱԿԱՆ ժո-
ղովրդավարութիւն եւ ազատականութիւն:

Պրն. Նախագահը ուշացած էր նման հայեցակարգով մը հանդէս գալու, բայց,
ուշ չէր, այնքան ատեն որ «մատը կը դնէր վերքին վրայ» եւ՝ յակնաւ-անուանէ:

Կարելոր է յիշատակել իր թուագրումներէն հետեւեալները, որոնք ԲԱՐՁԻ-
ԹՈՂՈՒՄՈՒ Էին անկախութեան շրջանին, խոսքանցնելով, չորցնելով, ցամ-
քեցնելով ու ամբեցնելով ԱՍԲՈՂՁ իրականութիւն մը, այսպէս.

- «Տնտեսութեան, բարձր փորձագիտութիւններու, ռազմաարդիւնաբերական
համալիրի, գիտութեան, կրթութեան եւ առողջապահութեան» նկատմամբ ան-
փութութիւն:

- «Արտաքին ու պաշտպանական քաղաքականութեան, ժողովրդագրական,
տեղեկատուական եւ սնունդի անվտանգութեան» հայեցակարգերու բացակա-
յութիւն:

- «1994էն ի վեր չկար Արցախի քաղաքական-ազգային վերաբերեալ յստակ
տեսլական»:

- «Մենք տանուլ տուինք տեղեկատուական պատերազմին մէջ՝ թէ՛ արտա-
քին, թէ՛ ներքին դաշտէն ներս», որովհետեւ «Սուտը՝ իրականութեան նմանա-
կումը, սողոսկուած էր ամենուրեք, դառնալով ազգային ապահովութեան սպառ-
նալիք»:

- Չունէինք կազմակերպուած պետութիւն, յառաջանցիկ տնտեսութիւն եւ
գիտութիւն, ուժեղ բանակ, ժողովրդավարական հասարակութիւն, ազատ մա-
մուլ... մենք յաջողած էինք խաբել մի միայն մենք զմեզ եւ այսպէսով իսկ ար-
դէն ստորագրել պարտութեան թուղթին տակ»:

- «Հայաստանի երրորդ հանրապետութիւն»ը այլեւս անցեալ է, մենք կ'ա-
ռերեսուինք նոր իրականութեան հետ, ինչ որ մեզ կը ստիպէ ըլլալու չափա-
կանց հաշունեկաւ եւ նպատակասլաց»:

- «Մենք պետք ունինք հասկնալու, որ մեզի համար կը սկսի պատմութեան
նոր էջ մը իր մարտահրաւերներով եւ այս անգամ՝ չսխալելու, գրագետ եւ ար-
հեստավարժ գործելու բացառիկ հրամայականով»:

- «Վերջին պատերազմին պարտութիւնը նոյն այդ համակարգին պարտու-
թիւնն էր, ոչ թէ պինուորին, ժողովուրդին եւ ազգին»:

Կը մնայ որ Պրն. Նախագահին այս մտորումները համակողմանիօրէն լու-
սարչակի տակ առնուին, քննարկումներու թէ սերտողութիւններու ճամբով,
հասնելու համար, ընդունելի եւ իրագործելի հասարակ-յայտարարներու:

Առ այդ, հետաքրքրական է, մինչեւ օրս ներկայ Հայաստանը ԵՐԿՐՈՐԴ) հանրապետութիւն
նկատողները, ո՞ր պիտի տեսնեն ՉՈՐՐՈՐԴ հանրապե-
տութեան դերը, թէ՞ ոչ, պիտի պնդեն այս վերջինը եւս նկատել երրորդ, հետե-
ւաբար, ամեն ինչ պահելով իր «կաղապարուած» պարունակին մէջ, հոսկ, ա-
մեն ինչ քայլ մը ետեւ մղելով, բան մը չընելու կամ բան մը չկերտելու... ինք-
նախաբերութեամբ:

Միւս կողմէ, եթէ մեր խորագիրը վերագրեցինք «տեսիլք թէ՞ պատրանք» եւ
«հաւատք թէ՞ ցնորք», պարզապէս ցոյց տալու կամ յուշելու, որ մէկէ աւելի տըր-
եալներ կան, որոնք երբեք լաւատեսութիւն չեն ներշնչէր մօտալուտ ապագայի
մը լուսաւորութիւնը, ցուցնելով, այնքան ատեն որ՝ հորիզոնին վրայ այդ յոյ-
սերը աղօտ են...:

Պէյրուք



ԻՆՉՈՐԻ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՍՏԵՓԱՆ ՆԱՀՈՒՄԵԱՆԻ ԴԷՄ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԳԵՈՐԳ ՀԱԼԷՊԼԵԱՆ

Ստեփան Շահումեանը կը պատկանի հայոց մեծերու շարքին, ան մեծ հայրենասեր էր եւ մեծ յեղափոխական: Ան կը պատկանի ազգային գործիչներու այն հոյլին, ինչպիսիք էին ՝ Միասնիկեան, Սրապիոնեան, Կարախանեան, Սահակ Տէր-Պաքրիկեան, Հայկ Բժշկեան, Աղասի Խանճեան, եւ այլն, որոնք կը կարծէին որ, պոլշեիկի գեղեցիկ գաղափարները ազատութիւն կը բերեն հայ ժողովուրդին: Այս գործիչները օժտուած էին ազգային ուժեղ քնաորութեամբ, հոգեկան կերտուածքով, մեծ անհատականութեամբ: Ասոնց մէկ մասը, հետագային հասկցան պոլշեիկեան հասարակարգի հակազգային էութիւնը եւ մեծ յուսախաբութիւն ապրեցաւ: Ասոնց մեծ մասը դարչաւ անհատի պաշտամունքի զոհ:

Սակայն, ելլելով պատմութեան հրամայականէն, այստեղ կ'ուզենք յատուկ անդրադառնալ Ստեփան Շահումեանի ազգային- յեղափոխական գործունէութեան կարեւոր դրուագներուն եւ ինչու՞ յետ-սովետական փլուզման շրջանին ան դարչաւ ատրպէյճանցիներու ատելութեան թիրախը:



1988-ի Արցախեան Շարժման տարիներուն, յատկապէս Սովետական Միութեան փլուզումէն յետոյ, Ստեփան Շահումեան յայտնուեցաւ հակօտնեայ դիրքերու միջեւ: Այդ տարիները բարդ էին եւ ոչ հեզասահ: Ազատելով Խորհրդային կայսրութեան աքսաններէն, իրաքանչիւր ժողովուրդ, ելլելով իր ազգային գաղափարախօսութեան հիմնադրոյթներէն, վերաքննած էր իր անցած պատմութիւնը, սրբագրած սխալները ՝ առաջադրելով օրակարգի առաջնահերթ խնդիրները: Այս շրջանին, կարեւորագոյն նշանակութիւն կը ստանայ ազգային դաստիարակութեան հիմնախնդիրը: Կործանումի կ'ենթարկուէին խորհրդային աստուածները, կը տապալուէին արշանները, կը վերակենդանանային ժողովուրդի պատմական յիշողութեան մէջ ջերմօրէն պահպանուած ազգային գործիչներու յուշարձանները, ազգային շարժման ալիքներով հրապարակ կ'իջնէին նոր գործիչներ, որոնք վրէժով եւ ատելութեամբ լեցուն՝ հինը կործանելու եւ պատմութեան աղբանոցը նետելու կոչերով հանդէս կու գային:

Այսպիսի պատմական իրավիճակին մէջ, Ատրպէյճանի մէջ առաջին ծրագրաւորուած հարուածները կ'ուղղուէին Ստեփան Շահումեանի դէմ: Գրեթէ բոլոր տեղերէն հանուեցան իր արշանները, վերանուանուեցան իր անունը կրող բոլոր բնակավայրերը, փողոցները եւ հիմնարկութիւնները: Մամուլի մէջ արշաւ սկսաւ Ստեփան Շահումեանի դէմ որպէս «հայ նալիոնալիստ»: Այս թէպէտ նոր չէ, այն ժամանակին առաջին անգամ առաջ բերած է Նարիման Նարիմանովը ՝ Լենինին ուղղուած նամակով:

Ատրպէյճանի Մուսավաթական կառավարութիւնը 1919 եւ 1920 թուականներուն, 1918 թ. Մարտի 31-ը նշած են որպէս համազգային սուգի օր: Իսկ Հէյտար Ալիեւ 1998 թ. Ապրիլ 26-ին հրամանագիր ստորագրած է՝ «Մարտի 31-ը ատրպէյճանցիներու ցեղասպանութեան օր»: Ինչու՞ Ատրպէյճանցիներու համազգային ատելութիւնը Ստեփան Շահումեանի նկատմամբ:

Ստեփան Շահումեան համայնավար կուսակցութեան ականաւոր գործիչ էր, բայց միաժամանակ ուներ ազգային քնաորութիւն եւ դիմագիծ, ան բոլոր հիմնախնդիրները լուծելու համար կ'առաջնորդուէր հայոց ազգային գաղափարախօսութեան պահանջներէն: Հայ ժողովուրդի եւ հայոց հայրենիքի գաղափարները իր մօտ ելակէտային էին: 1917 թ. Հոկտեմբերին, Ռուսաստանի Կովկասեան Համագումարին ան առաջարկեց հետեւեալ կարգախօսը. - «Թող Ռուսաստանը լինի ազատ հանրապետութիւնների միութիւն, այսինքն ՝ քետերացիա, որը Հաւասար Միաւորների Միութիւն է»: Յաւիտ, Շահումեանի այս առաջարկը կը մերժուի: Բայց անոր ելոյթի ազդեցութեան տակ համագումարին ներկայացուած բանաձեւի նախագիծին մէջ կը կատարուի փոփոխութիւն եւ կ'ընդունուի հետեւեալ տեսակէտը. - «Կովկասի ատոնումիա՝ ՍԷՅՄ-ի ստեղծմամբ, տեղական լայն ինքնավարութիւն ՝ Կովկասի ներսում վարչատնտեսական նոր միաւորների սահմանմամբ»:

Այդ որոշման համաձայն, Շահումեան կ'առաջարկէ Անդրկովկասը բաժնել երեք մարզերու. -

Ա) Արեւմտեան Անդրկովկաս- Զուրաբիսի, Պաթումի նահանգները եւ Թիֆլիսի նահանգի մէկ մասը:

Բ) Արեւելեան Անդրկովկաս- Տրեւանի, Կարսի, Գանձակի նահանգները եւ Թիֆլիսի նահանգի մէկ մասը:

Գ) Պաքուի, Գանձակի մէկ մասը եւ Տաղստանի մարզը

Արեւմտեան Հայաստանի ճակատագրի մասին Շահումեան կ'առաջարկէ հետեւեալը. - «Ազգային հարցի լուծման ժամանակ, անխուսափելիօրէն դրուում է նաեւ Թուրքահայաստանի հարցը: Այդ հարցի լուծումը մենք պէտք է թողնենք հենց այդ մարզի բնակչութեանը, որն ինքը պէտք է որոշի իր բախտը: Ռուսաստանին միանալու ՝ նրանց որոշման դեպքում, նրանք պէտք է միացւեն հայերին»:

Շահումեանի ջանքերով, 1917 թ Դեկտեմբեր 29-ին, Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը որոշմնագիր կ'ընդունի «Թուրքահայաստանի մասին», ուր կ'ըսուի. - «Ժողովրդական կոմիսարների սովետը յայտարարում է հայ ժողովուրդին, որ Ռուսաստանի բանտորա-գիւղացիական կառավարութիւնը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուբացուած «Թուրքահայաստանի» հայերի ինքնորոշման իրաւունքը, ընդհուպ՝ լիակատար անկախութիւն»:

Ինչպէս կը տեսնենք, Շահումեանի ազգային ծրագիրները լիովին կը բխէին հայ ժողովուրդի շահերէն եւ շատ քիչ կը տարբերէին հայ ազգային աւանդական կուսակցութիւններու մօտեցումներէն:

1918 թ. Մարտ 31-ին Մուսավաթ կուսակցութիւնը Պաքուի մէջ կը դիմէ զինուած խռովութեան ՝ իշխանութիւնը վերցնելու եւ իր կողմէ Անդրկովկաս հրաւիրուած թուրքական զօրքերու առաջընթացը դիւրացնելու համար: Իշխանութիւնը վերցնելու պարագային, Պաքուի մէջ պէտք էր կազմակերպուէր հայերու զանգուածային կոտորած: «Եթէ նրանք յաղթանակէին Պաքում, քաղաքը կը յայտարարուէր Ատրպէյճանի մայրաքաղաք, բոլոր ոչ-մուսուլմանական տարրերը զինաթափ կ'արւէին եւ կը կոտորուէին: Մուսուլմանական հակալեղափոխական տարրերը դրութեան տէրը կը դառնային ամբողջ Անդրկովկասում», Շահումեան կը գրէ իր յուշերուն մէջ:

Տօրեայ մարտերուն (Մարտ 30- Ապրիլ 1), Պաքուի Խորհուրդի զինուած ոյժերը փայլուն յաղթանակ տարին, Մուսավաթը ջախջախուած էր: Շահումեանի հետ միասին մասնակցեցան նաեւ ՀՅԴ-ի զօրամիաւորումները Մուրատի եւ Սեպուհի ղեկավարութեամբ: Այս մարտերուն, երկու կողմերէն մասնակցած են աւելի քան 20,000 մարդ, իսկ սպաննուածներու թիւը ՝ 3 հազարէ աւելի: Սիւս այս իրադարձութիւններն են օգտագործած Ատրպէյճանական նախկին եւ մերօրեայ իշխանութիւնները ՝ «Մարտի 31-ը ատրպէյճանցիների ցեղասպանության օր» յայտարարելու համար:

Ականատեսներու վկայութեամբ, երբ Մուրատ եւ Սեպուհ կ'անցնին դէպի Պաքուի ճակատ, Շահումեան իրենց ընդունելով հետեւեալը կ'ըսէ. - «Կը լսէք այս թնդանօթներու որոտը, թշնամին կ'աշխատի գրաւել Պաքուն, որ յետոյ պիտի յարչակուի այն փոքրիկ ժողովուրդի վրայ, որ քաշուած է Տրեւանի շուրջը եւ որ շնչահեղձ կը տառապի: Պաքուն պաշտպանել կը նշանակէ Տրեւանը պաշտպանել, գնացէք հանգստանալու, երկու օրից ամէն միջոց կը դնենք չէր տրամադրութեան տակ եւ դուք կը կապմէք չէր կարմիր գունդը»: Ստեփան Շահումեանի Պաքուի ղեկավարութեան ժամանակաշրջանին, խրախուսելով տեղի հայութեանը, բազմիցս յայտարարած է. - «Պաքուի պաշտպանութիւնը ՝ պաշտպանութիւնն է նաեւ Արարատեան Հայրենիքին»:

Այսպիսով Շահումեանի քաղաքականութեան շնորհիւ ՝

ա) Խորհրդային Ռուսաստանը ճանչցաւ Արեւմտեան Հայաստանի անկախութեան իրաւունքը

բ) Թուրքերը հարկադրուած էին զգալի ոյժեր տեղադրել Գանձակի մէջ, Պաքուի վտանգի պարագային, այդ ոյժերը պէտք է մասնակցէին հայերու դէմ մղուող պատերազմին

գ) Տօրեայ կռիւներուն յաղթանակ տանելու պարագային, Մուսավաթական ոյժերը պէտք է շարժէին դէպի Հայաստան ՝ հայերու համար բանալով պատերազմի երկրորդ ճակատ

դ) Այդ երկու լրացուցիչ ոյժերու մասնակցութիւնը 1918-ի Մայիսեան թուրք-հայկական ճակատամարտերուն կրնար հայերու համար ճակատագրական նշանակութիւն ունենալ:

ե) Յիշեալ հանգամանքները բախտորոշ նշանակութիւն ունեցան Մայիսեան ճակատամարտերով ստեղծուած Հայաստանի Անկախ Ա. Հանրապետութեան հռչակման

զ) 1918թ. Մարտին, Շահումեան Պաքուի հայութեան փրկեց ստոյգ ցեղասպանութենէ:

Վերոնշեալ անհերքելի փաստերու հիման վրայ է հիմնուած ատրպէյճանցիներու անսահման ատելութիւնը ազգային-յեղափոխական գործիչ՝ Ստեփան Շահումեանի հանդէպ:

L.nu Անճելըս

Զգայացունց Դէպքերի Ժամանակաշրջան

Յատուկ «ՊԱՅԲԱՐ»-ին

Ստացուել է այնպէս, որ վերջին 2-3 տարում ամէն ինչում եւ ամենուր գեր-իշխում է զգայացունց դէպքերով յագեցած յեղափոխական մթնոլորտը: Հասարակ ընտանեկան, ընկերական ու հարեւանական միջավայրից սկսած մինչեւ պետական ամենաբարձր կառոյցներում առաջնային եւ ուղղորդող է դարձել զգայացունց, որոնց կուտակումն էլ ի վերջոյ յանգեցնում է մի նոր յեղափոխութեան: Սակայն յեղափոխութեան վերաբերեալ տեսութիւններ մատուցելով՝ յեղափոխութիւն չես անի: Հետեւաբար հարկաւոր է մեջտեղ բերել մի լուրջ հայեցակարգ, մի նոր, թարմ լուրուզ-կոչ եւ բոլորը չեր կողքին կը լինեն: Բայց այս անգամ ցանկանում եմ զգայացունց դէպքերին մի փոքր հանգամանալից անդրադառնալ:

Ծաբաթուայ կարեւոր հանգրուաններից մէկը Փաշինեանի քաղաքական հակագրոհներն էին ընդդէմ Սերժ Սարգսեանի: Դրանցում «Իսկէնդերի» թեմային անդրադառնալով վարչապետն ուզեց ցոյց տալ, որ նախկին վարչակարգի գնած վէճերը խոտան են եղել: Սակայն դա բումբերանգի ազդեցութիւն ունեցաւ եւ յանգեցրեց մի նոր քաղաքական արշաւի հենց իր դէմ: Ճիշդն այստեղ այն էր, որ այդ վէճի պարկուճներով լիցքաւորումը 10 տոկոսով աւելի քիչ է եղել, որը չի նշանակում, թէ այն խոտան է եղել: Միանգամայն սպասել էր սակայն, որ այդ յայտարարութիւնը նպաստում է մեր դաշնակցի հետ յարաբերութիւնների վատթարացմանը: Ի հարկէ, յետոյ յայտարարուեց, որ վարչապետին սխալ են վեկուցել այդ մասին, սակայն պարզ էր նաեւ, որ դա քաղաքական յարաբերութիւններ վատթարացնող հարցը էլ չի: Ռուսաստանը մեզ ընտրել է իրեն դաշնակից նախ եւ առաջ իր քաղաքական շահերից ելնելով եւ Հայաստանը չի լքի, քանի դեռ հպօր է: Մեր քաղաքական միամրտութեան մասին է վկայում նաեւ այն, որ Փաշինեանը մի «Իսկանդերի» մասին յայտարարութեամբ ումանց համար կարող է Փութինի «դաբրոն» ապահովել իշխանութեան գալու համար:

Փաստ է, որ Արցախեան պատերազմն աւարտուել է, սակայն ներքին հակասութիւնների աւարտը չի երեւում եւ զգայացունցի պակաս չկայ: Պաշտպանութեան Նախարարութեան Գլխաւոր շտաբը յայտարարութեամբ պահանջեց վարչապետի հրաժարականը: Ումանք դա որակեցին ռազմական յեղաշրջման սկիզբ, իսկ Փաշինեանը՝ ռազմական յեղաշրջման փորձ եւ ստորագրեց Գերագոյն Հրամանատարութեան պետ Օնիկ Գասպարեանի պաշտօնանկութեան հրամանը: Հայաստանի նախագահը չհաստատեց հրամանը: Տարօրինակն այն է, որ Գերագոյն Հրամանատարութեան երկրորդ յայտարարութեամբ հաստատեց նորից, որ ոչ մի ոյժի կողմից չի ուղղորդում եւ գործել է իր իսկ կամօք: Սովորաբար երբ խօսք է գնում ռազմական յեղաշրջման մասին, յայտարարութեանը պետք է հետեւի յեղափոխութեանը եւ ռազմական դիկտատուրայի ստեղծմանը միտում ռազմական գործողութիւնը: Բայց դա տեղի չունեցաւ:

Առերեւոյթ թուում է, թէ ԳՀ-ն քաղաքական յայտարարութիւն արեց, որը հակասում է բանակի քաղաքականութեանը չխառնուելու իրաւական գործերին: Կարելի է կարծել, որ յայտարարութիւն կատարողները իրօք չգտել են յեղաշրջման, բայց չեն գնացել դրան արտաքին ճնշման (ենթադրում է՝ ռուսական) պատճառով, քանի որ նրան չեռնտու չէ այստեղ իշխանափոխութիւնը: Բացառուած չէ նաեւ, որ նրանց կանգնեցրել է Թուրքիայի հանդէպ վախը, որի արտագործնախարարի յայտարարութիւնը բաւական խօսուն էր: Իրավիճակի սթափ վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ դրա հետեւանքները կարող են ողբերգական լինել: Սակայն տեսանելի դարձաւ նաեւ, որ ԳՀ յայտարարութիւնը նպաստեց, որպէսզի վարչախումբը լուրջ հաշուեկշռի ենթարկի իր ուժերը եւ արտահերթ ընտրութիւնների մասին կարեւոր յայտարարութիւններ անի: Եւ եթէ այս անգամ ընդդիմադիրները չհամաձայնեն, աւելի կը նպաստեն Փաշինեանի վարկանիշի բարձրացմանը: Այնպէս որ խելամիտ կը լինի լիցքաթափուել, համախմբել բոլոր ուժերը եւ կազմակերպուած ու միասնաբար մասնակցել նոր ընտրութիւնների: Քանի որ առանց արեան իշխանութեան հասնելու այլ ճանապարհ չի երեւում:

Ակնյայտ է, որ Փաշինեանը արտաքին քաղաքականութեան, դիւանագիտութեան, տնտեսութեան, իրաւագիտութեան, ապահովութեան, ռազմական ոլորտներին տիրապետում է զուտ լրագրողական մակարդակով: Բայց երբ ամբողջ պետութեան ճակատագիրը այդպիսի մարդու յեռքում է, այդ գիտելիքները խիստ անբաւարար են: Ողբերգութիւնն այն է, որ անգամ պատերազմը տանուլ տալուց յետոյ էլ Փաշինեանն այնքան է տարուած իր անչով եւ իր աթոռով, որ չի պատկերացնում, թէ ինչ է տեղի ունեցել եւ «թաւիշին վերջ տալու» մասին է խօսում: Այս դէպքում պատահական չէ, որ մարտնչող տգիտութեան եւ դիւետանտիզմի դէմ ի վերջոյ ընդվզեցին նաեւ պիւնտրականները: Փաստ է, որ այս իշխանութեան բոլոր չախողումներից ամենաջօշափելին ռազմական պարտութիւնն է, որի գլխաւոր պատճառներից մէկն էլ վարչապետի «նապոլեոնական» այդ հակումներն են: Դրանց արդիւնքը ըստ որոշ պօրավարների ասելով պատերազմի ժամանակ շատ դէպքերում քառսի յանգեցնող մէկը միւսից «փայլուն» որոշումներ ընդունելն է եղել: Հիմա էլ վարչապետը պարմանում է, թէ ինչու՞ է աշխատավարձը բարձրացած սպայական

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ, ՓՐՈՖԷՍՈՐ

կազմ ունեցող եւ ելակ ուտող պիւնտրների բանակն իր հրաժարականը պահանջում: Չարմանում է, քանի որ անապասելի եղաւ այն իրողութիւնը, որ բանակում նաեւ պատուախնդիր սպաներ կան, որոնց համար առաջնայինը պետութիւնն է ու հայրենիքը... Կարծում եմ, այդպիսիք քիչ չեն նաեւ ոստիկանութեան համակարգում եւ այլ կառոյցներում:

Դեռեւս 1930-ականներին հայ հասարակական-քաղաքական գործիչ, փիլիսոփայ, խմբագիր Հայկ Ասատրեանը նկատել է, որ հայութեան մէջ առաջացել է մի շերտ, որը հայութիւնից հեռացել է, հայկական ամէն ինչ ատում է, իր նպատակներին հասնելու համար պատրաստ է անցնել ցեղակիցների դիակների վրայով, հայի եւ Հայաստանի հանդէպ վարում է այնպէս, ինչպէս կը վարուէր թուրքը: Հայկ Ասատրեանը նրանց այդպէս էլ կոչեց՝ թուրքացած հայեր եւ ահապանգեց, որ այդ տեսակն այնքան մեծաթիւ է, որ սպառնում է ազգի գոյութեանը: Ասատրեանը նրանց դէմ պայքարը համարեց ամենակարեւոր հարցը եւ գտնում էր, որ քանի դեռ այդ շերտը ճնշուած չէ, հայութիւնը չի կարող տեղ ունենալ արեւի տակ: Հետաքրքիր է, ինչ կ'աւեր նա մեր օրերի համար:

Ընդհանուր առմամբ, այս ամենում հարցականներն էլ շատ-շատ են: Պատերազմի քառասունչորս օրերի ընթացքում բանակը դէպի թշնամու տարածք մի սանտիմետր չի առաջացել, չի օգտագործել ժամանակակից տեխնիկա, պարտուել է, տալով հինգ հազար զոհ ու տաս հազար վիրաւոր, իսկ գէներալիտետը լուռ էր: Նոյեմբերի իննին էլ բանակը ծպտուն չհանեց, չպահանջեց վարչապետի հրաժարականը: Բայց երեքուկէս ամիս յետոյ, երբ խօսք հնչեց «Իսկէնդերի» մասին՝ պահանջում է Նիկոլի հրաժարականը: Պարպից էլ պարզ է, որ բանակի ողջ հրամանատարութիւնն իր մեղքի բաժինն ունի պարտութեան համար, բայց վարչապետից հրաժարական է պահանջում «Իսկէնդերին» վատաբանելուց յետոյ: Կարծում եմ այս ամէնի պատճառն այն է, որ նրանք ընդամենը զոհ գնացին ժամանակակից քաղտեխնոլոգիային եւ չհասկանալով քաղաքական այդ խարդաւանքը՝ օգնեցին սեւ վարչախմբին սպիտակ երեւալու գործում: Ամենացաւալին այն է, որ հերթական անգամ հինգ հազար տարուայ պատմութիւն ունեցող ազգիս օրը ցերեկով մատների վրայ խաղացրին, խաբեցին ինչպէս մանկահասակ երեխայ, իսկ բանակի գէներալիտետը փոխանակ պրադուի իր գլխաւոր առաքելութիւնն իրականացնելու գործով եւ ժողովրդին պաշտպանի նմանատիպ որոգայթներից, ինքն է երկու ոտքով ընկնում այս պարպունակ հնարքների թակարդը:

Յատկանշական է նաեւ այն իրողութիւնը, որ 30 տարուայ մէջ երբեք Թուրքիան չէր արչագանգել Հայաստանի ներքին գործերին: Իսկ հիմա մէկ օրուայ ընթացքում ամենաբարձր ամբիոններից ի աջակցութիւն Նիկոլ Փաշինեանի երեք յայտարարութիւն է անում: Մտավախութիւն ունեմ, որ պատմութիւնը դարձեալ կրկնուի եւ չեմ բացառում անգամ, որ Հայաստանը «ռազմական յեղաշրջման» փորձը կանխելու համար Թուրքիայից օգնութիւն կը խնդրի: Իսկ Ռուսաստանն առանց երկրի «օրինական ընտրուած» ղեկավարութեան խնդրանքի իրաւունք չի ունենայ միջամտելու Հայաստանի ներքին գործերին:

Այս խորապատկերի վրայ 19 պօրավարի եւ մօտ այդքան էլ գնդապետի տարածած յայտարարութիւնը նման էր համբերութիւնը հատած առիծի մոնչոցի, քանի որ նրանք գտնում են, թէ երկրի ներկայի իշխանութիւնը վտանգ է Հայաստանի գոյութեան համար, եւ միակ փրկութիւնը նրա հեռացումն է: Յարգարժան որոշ պօրավարներ, հոգեւորականներ, փաստաբաններ, լրագրողներ եւ այլք առիթն օգտագործելով փորձում են իրենց ծրագրերն ու փրկութեան իրենց ուղին դարձնել մէկ տարուայ անտանելի փորձութիւններից դառնացած, ջղայնացուցած, խոր ցաւի ու հիասթափութեան մէջ յայտնուած հայութեան նպատակն ու օրակարգը: Մոռանալով, որ յաջողութեան հասնելու համար հարկաւոր է ներկայացնել նաեւ տնտեսական, միջազգային եւ միւս բոլոր խնդիրների իրատեսական լուծման ուղիներ: Նրանք թերեւս պիտի յիշեն, որ երկրի կործանման սարսափով ու ոսկէ սարերի խոստումով ընդդիմութիւններ Հայաստանը 30 տարի շարունակ տեսել է եւ նոր, թարմ ելքեր առաջարկեն: Հարկաւոր է չմոռնալ, որ ժողովրդի զգալի մասը հաւատում է, թէ Հայաստանի բոլոր խնդիրների պատճառը նախկին իշխանաւորներն են, ովքեր թալանել են ժողովրդին: Կոռուպցիայի դէմ օրինական պայքարը նրանք անուանում են «թաւիշ» եւ միակ ճիշտ քայլը համարում են բոլոր նախկիններին անյապաղ բանտ նետելն ու բոլորի դղեակները խլելը:

Համոզուած եմ, որ ժողովուրդը յոգնել է այս ամէնից, հիասթափուել բոլորից եւ յոյսով սպասում է մի նոր, թարմ եւ չկեղտոտուած ու չվարկաբեկուած ոյժի: Ոյժ, որն իր նոր, պատճառաբանուած ու ժողովրդին իրապէս սրտամօտ կոչերով, սեւ ու սպիտակ միաւորելով, տնտեսական, քաղաքական ու ազգային յստակ օրակարգով Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը կը բռնկեցնի ու ժողովրդին կ'առաջնորդի դէպի նոր յաղթանակներ:

Սրեան

25.02-3.03.2021

Գորշ գայլերը ճուշիում

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Թուրքիայի եւ Ատրպեյճանի նախագահները՝ Ռ. Թ. Էրտողանը եւ Ի. Ալիևը շուտով կը հրաւիրուեն մեր պատմական Շուշի քաղաք, որտեղ Թուրքիայի աջ ծայրայեղական, ազգայնական շարժման ղեկավար, դոկտոր Տեւեթ Պահ-չելին հիմնադրում է «Գորշ գայլերի» դպրոց: Նախագահները հրաւիրած են մասնակցել շինութեան հիմնադրմանը:

Վերոյիշեալ կազմակերպութիւնը սերտօրէն կապուած է թուրքական Ազգայնական շարժում կուսակցութեան (ԱԾԿ - Milliet Hareket Partisi - MNP) հետ, որը հանդիսանում է աջ ծայրայեղական գաղափարախօսութեան կրող, ստեղծուել է 1969թ. գնդապետ Ալփարսլան Թիւրքեշի կողմից, դաւանում է նաեւ փանթիւրքիզմի գաղափարախօսութիւնը: Այս կուսակցութեան տրամադրութեան տակ է հենց գտնուում «Գորշ գայլեր» երիտասարդական ռազմականացուած կազմակերպութիւնը: Ա. Թիւրքեշի մահից յետոյ կուսակցութեան ղեկավար դարձաւ Տեւեթ Պահչելին, իսկ «Գորշ գայլեր» կազմակերպութեան ղեկավար՝ Սիմետ Շըլտըրըմը:



Չմոռանանք ընդգծել, որ ԱԾԿ-ն սերտ միութեան մէջ է Էրտողանի «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան հետ: Դպրոցը ունենալու է 9 դասասենեակ եւ կոչուելու է Ատրպեյճանի օրիներգի հեղինակ, կոմպոզիտոր Ուղեյիր Հաճիպէյովի անունով:

Ինչպէս նշեցի վերելում, «Գորշ գայլեր» (Bozkurt) թուրքական աջ ազգայնամով կազմակերպութիւնը ստեղծուել է 1969թ. թուրքական բանակի գնդապետ (Կիպրոսում ծնուած) Ալփարսլան Թիւրքեշի կողմից: Այդ կազմակերպութեան մարտիկները բազմիցս մեղադրուել են մի շարք սպանութիւնների, ահաբեկչական ակտերի, այդ թւում եւ Հռոմի Պապ Յովհաննէս Պօղոս Յրկորդիի սպանութեան փորձի մէջ (1981թ. Մայիսի 13-ին): Հռոմի Պապին գնդակահարողը՝ Մեհմետ Ալի Աղջան «Գորշ գայլերի» ահաբեկիչ էր:

«Գորշ գայլերի» բնութագրական առանձնայատկութիւնների մէջ մտնում է բռնութեան ապաւենը եւ զոհաբերութեան պաշտամունքը պայքարում:

Կազմակերպութեանն անդամագրուելիս տրուում է հետեւեալ «իդէալիստի երգումը».

- Շրդում եմ Աստծով, դուրանով, հայրենիքով եւ նրա դրօշով: Մեր հերոսները, փորձուած զինուորները կարող են համուզուած լինել մեր նուիրուածութեանը Թուրքիայի իդէալներին, երիտասարդութիւնը կը շարունակի չեր ճակատամարտը կոմունիզմի, կապիտալիզմի, ֆաշիզմի եւ իմպերիալիզմի բոլոր չեւերի դէմ: Մենք կը պայքարենք մինչեւ վերջին զինուորը, մինչեւ վերջին շունչը, մինչեւ արեան վերջին կաթիլը ազգայնական Թուրքիան պահպանելու համար, ընդհուպ Մեծ Թուրանի ստեղծումը: Թուրքիայի իդէալներին նուիրուած երիտասարդութիւնը երբեք չի նահանջի, մենք կը լինենք անդողդւելի, անսասան:

Մենք կը յաղթե՛նք, մենք կը յաղթե՛նք, մենք կը յաղթե՛նք:
Աստուած պահապան թուրքերին, Աստուած փառաբանի նրանց:
Ամեն:

«Գորշ գայլերը» Արդուլայ Չատլիի ղեկավարութեամբ ահաբեկչական ակտեր էին կազմակերպում հայերի, յոյների դէմ, պայթեցրեցին 1915թ. ցեղասպանութեանը նուիրուած յուշարձանը Փարիզի արուարձանում 1984թ. Մայիսի 3-ին:

Այդ կազմակերպութիւնը պաշտօնապէս արգելուած է Ֆրանսիայի տարածքում: Իմիջիայլոց, ժամանակին «Գորշ գայլերը» արգելուած էին նաեւ Հէյտար Ալիեւի կողմից:

«Գորշ գայլերի» անդամ Ալփարսլան Չելիքը, 2015թ. Նոյեմբերի 24-ին գնդակահարեց Սիրիայի Լաթաքիայի օդային տարածքում խոցուած CY-24 ռուսական ինքնաթիռից ինքնանետիչով (կատապուլտ) դուրս նետուած ռուս օդաչու Օլեգ Պեշկովին: CY-24-ը խոցուել էր թուրքական ռազմա-օդային ուժերի F-16-ի կողմից, իսկ անկարգելով դուրս նետուած օդաչուն գնդակահարուեց դեռ օդում: Ընդ որում, 2-րդ օդաչուի՝ Կոնստանտին Մուրախտինի որոնման աշխատանքները կազմակերպելիս նոյն «Գորշ գայլերը» խոցեցին եւս մէկ ռուսական ուղղաթիւ եւ գնդակահարեցին ծովային հետեւակ Ալեքսանդր Պոլիմիչին:

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱՐԱՅԵՆՅԱՆ

Ապահովութեան հարցերով փորձագետ

Եւ այսպէս՝ ո՞վ է Ալփարսլան Չելիքը, որին թուրքական իշխանութիւնները աւելի ուշ չեքբակաւեցին (ռուսներին մի փոքր հանգստացնելու համար), բայց ընդամենը ապօրինի զենք կրելու մեղադրանքով:

Ալփարսլանի հայրը՝ Ռամադան Չելիքը հանդիսանում է թուրքական ԱԾԿ ծայրայեղ աջ կուսակցութեան բարձրաստիճան գործիչ: Այդ կուսակցութիւնը 40 մանդատ ունի (550-ից) Թուրքիայի պառլամենտում:

Այս միջադէպից յետոյ ռուս-թուրքական յարաբերութիւնները մօտաւորապէս 9 ամիս տնտեսական եւ քաղաքական ճգնաժամի մէջ էին, սակայն 2016թ. Յունիսին Էրդողանը պաշտօնական ներողութիւն խնդրեց նոյեմբերի 24-ի միջադէպի համար, եւ Կրեմլը «գրկաբայ» ընդունեց այդ ներողութիւնը: Յարաբերութիւնները սկսեցին սրընթաց թափով վերականգնուել:

Յարաբերութիւնները գնալով ջերմանում էին, սակայն թուրքը մնում է թուրք (ոմանք, այդ թւում եւ ռուսները, դեռ համուզուած չէին դրանում) եւ 2016թ. Ռեկտեմբերի 19-ին ժամը 19:05-ին սիրիական «Շեյմս ալ-ֆաթի» եւ «Գորշ գայլեր» կազմակերպութիւնները համատեղ կազմակերպեցին Թուրքիայում Ռուսաստանի Ռաշնութեան դեսպան Անդրեյ Կ'առլովի սպանութիւնը: Նրան գնդակահարեց 22 տարեկան թուրք ոստիկանը՝ Մերթ Ալթինթաշը, երբ դեսպանը ելոյթ էր ունենում Անքարայի ցուցահանդէսներից մէկում (ժամանակակից արուեստի ցուցահանդէսում, ռուսական ֆոտոցուցահանդէսի բացման ժամանակ), ընդ որում ահաբեկիչը չփորձեց փախչել, նա մնաց տեղում («Գորշ գայլերի» սկզբունքով եւ ոչնչացուեց թուրքական յատուկ ջոկատայինների կողմից:

Պարզուեց, որ Ալթինթաշը կապուած էր ինչպէս «Գորշ գայլերի» (պոպ-քուրթ), այնպէս էլ «Թուրքիստանի իսլամական կուսակցութեան» հետ:

Մի փոքր մեկնաբանութիւն էլ, որը ի հարկէ մեծ գաղտնիք չէ, յամենայնդէպս ոչ ռուսական հետախուզութեան համար՝ «Գորշ գայլերը» սերտ կապուած են եւ գործօն կերպով համագործակցում են Հաքան Ֆիդանի կողմից ղեկավարուող թուրքական ազգային հետախուզութեան (MIT)-ի հետ: Աւելին, կազմակերպութեան որոշ անդամներ զբաղեցնում են հետախուզութեան մի շարք կարեւոր պաշտօններ:



Կարծում եմ ընթերցողս այլ մեկնաբանութիւնների կարիք չունի եւ լիովին պատկերացնում է, թէ ովքե՞ր են սովորելու Շուշի քաղաքի վերոյիշեալ դպրոցում, ինչո՞վ են զբաղուելու դպրոցի շրջանաւարտները, ովքե՞ր են լինելու թիւ 1 թիրախները, ի՞նչ երդում են տալու այդ աշակերտները ամէն առաւօտ «ուսուցչին» բարի լոյս մաղթելուց յետոյ, ի՞նչ դրօշներ եւ լուսանկարներ են պատկերազարդելու դպրոցի պատերը եւ փոքրիկ թանգարանը, ովքեր են այցելելու այդ դպրոցը եւ դասախօսութիւններ կարդալու:

Պարունայք խաղաղապահներ, լաւ պաշտպանէք այդ դպրոցը, ապահովէք դրա անդորրը ու անխափան դասընթացները, գուցէ եւ «շրջանաւարտները» այլեւս չկրակեն օդաչուների եւ դեսպանների վրայ: Այս «Գորշ գայլերի» կողքը հաճոյքով կը տեղաւորեմ նաեւ Ռամիլ Սաֆարովին, 2004թ. Փետրուարի 19-ին հայ սպայ Գուրգէն Մարգարեանին Բուդապէշտում քնած ժամանակ կայնահարողին: Գորշ գայլ էր նա, թէ՞ ինչ որ կենդանու արգանդից ծնուած եւ յատուկ պատրաստուած սեւ սատանայ, միեւնոյն է՝ 2012թ. Օգոստոսի 31-ին Ատրպեյճանահունգարական կոռուպցիոն յարաբերութիւնների շնորհիւ ազատուեց բանտից, վերադարձաւ Բաքու եւ դարձաւ ազգային հերոս:

Իսկ իմ ժողովրդին մի խորհուրդ՝ համախմբուէ՛ք, արհեստավարժներին ետ քերէք, փնտռէք դաշնակիցներ եւ գործընկերներ, մանկապարտեպից պատրաստէք զինուորներ, եւ յիշէ՛ք՝ լինել-չլինելու պատերազմը դեռ առջեւում է... կամ էլ թողնենք ու ազգովին հեռանանք այս տարածաշրջանից:

Նրեան

Զօր. Անդրանիկի Օնեգեան 156 Ամենակին Առիթով

ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՏԵՆԶՈՒԹԻՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԴԵՄՔԸ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՉԵԼԵՊԵԱՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

«Հայերեն բնագիրով Անդրանիկ Չելեպեանի հեղինակած «Զօրավար Անդրանիկ Եւ Հայ Յեղափոխական Ծարժումը» խորագրեալ գիրքը բազմիցս հրատարակուած է Ա.Մ.Ն.-ի եւ Պէյրութի մէջ (Այս յօդուածին համար օգտուած ենք Պէյրութ լոյս տեսած Բ. Տպագրութենէն, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատարակչատուն, 1986, 744 էջ,-Յ.Ի.): Սոյն գիրքին Տրեւանի մէջ 1989-ին հրատարակուած 40.000 (որ տակաւին պատկառելի քանակ մըն է) օրինակներու փոխարէն ծրագրուած էր 75.000 օրինակներ հրատարակել, սակայն օրուան կացութեան՝ Խորհրդային Միութեան փլուզման, Հայաստանի մէջ թուղթի սակաւութեան եւ այլ պատճառներով չիրականացաւ:



Անդրանիկ Չելեպեան

Խորհրդային վերջին տարիներու ըմբշամարտի ախոյեան, որուն անունը կը վրիպի յիշողութենէ (Սորայր Մուշեղեան- Յ. Ի.) [Սորիկ (Սորայր) Թագուրի Մուշեղեան (Սոյեմբերի 2, 1935, Երեւան, Հայկական ԽՍՀ, ԽՍՀՄ - Դեկտեմբերի 23, 2011, Երեւան, Հայաստան), հայ խորհրդային ըմբիշ, հայաստանցի աշխարհի առաջին ախոյեան (1958) եւ գաւթակիր[2]: 1986 թուականին հիմնել է «Զօրավար Անդրանիկ» համազգային միութիւնը: ԽՍՀՄ մարմնամարզի վաստակաւոր վարպետ (1963), ՀԽՍՀ վաստակաւոր մարպիշ (1967), ՀԽՍՀ մարմնամարզի եւ մարզանքի վաստակաւոր գործիշ (1980), ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի ախոյեան եւ գաւթակիր (1958), ԽՍՀՄ ախոյեան (1958-1959), ԽՍՀՄ ժողովուրդների II սպարտակիադայի յաղթող (1959), համամիութենական կարգի մրցավար (1974) ԽՍՀՄ անդամ 1967 թվականիցhttps://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%B8%D6%80%D5%A1%D5%B5%D6%80_%D5%84%D5%B8%D6%82%D5%B7%D5%A5%D5%B2%D5%B5%D5%A1%D5%B6] չեւնարկած է գիրքին վերահրատարակութեան եւ բարոյապէս նպաստած: Ան մեծ ոգեւորութեամբ կը յիշէր թէ ինք իբրեւ խորհրդային ախոյեան քանի մը տասնեակ տարիներ առաջ ինչպէ՛ս բեմին վրայ կուուած էր թուրք հակառակորդին հետ եւ զայն զգետնած: Ան մեզ տեղեակ պահեց թէ իր մարզարանը կ'օգտագործէ իբրեւ միջոց արտասահմանէն դէպի Արցախ հայ ազատամարտիկներ փոխադրելու համար ու մտադրած էր իւրաքանչիւր ազատամարտիկի նուիրել սոյն գիրքէն օրինակ մը: Ան իր մարզարանի հիւրասենեակի պատին կախած էր Զօր. Անդրանիկի եւ Մարաջախտ Յովհաննէս Բաղդամեանի խոշոր նկարները: Ան խոր յարգանք կը տածէր Անդրանիկ Չելեպեանի հանդէպ», կ'ըսէ Ժագ Չելեպեան, հեղինակին որդին:

Անդրանիկ Չելեպեան ծնած է Բեսապ, Սուրիա 1922-ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Հայ Աւետարանական Վարժարանը, զոր աւարտելէ ետք մեկնած է Հալէպ եւ ուսանած Ամերիկեան Գոլէճը (Aleppo College): 1944-ին աւարտելով վերադարձած է Բեսապ, ուսուցչական ասպարէզ մտնելով Հայ Աւետարանական Վարժարանին մէջ: Տարի մը ետք ան ուսուցչութեան կը կանչուի Հալէպի վերոնշեալ Գոլէճը, ուր այդ պաշտօնին վրայ կը մնայ չորս տարի (1945-1949), Հայ Սքուլի կրտսեր դասարաններուն դասաւանդելով ուսողութիւն եւ անգլերէն լեզու: 1949-ին կը փոխադրուի Պէյրութ, ուր կը պաշտօնավարէ Հ.Բ.Զ.Մ.-ի Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Տրկորդական Վարժարանը: 1950-ին Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Բնախօսութեան (Physiology) բաժանմունքի մէջ աշխատանքի կ'անցնի, ուր կը գործէ 14 տարի: Թովնտի կ'աշխատի գիտական գիրքերու նկարապարդմամբ, երեք բժշկական գիրքերու մէջ: Նաեւ բազմաթիւ յօդուածներով աշխատակցած է Պէյրութի «Ջանաւեր», «Սփիւռք» եւ «Նայիրի» թերթերուն:


Անդրանիկ Չելեպեան Լիբանանի քաղաքացիական պատերազմին ընտանեօք Ա.Մ.Ն. կը գաղթէ եւ կը հաստատուի Տիբրոյթ, ուր կը պաշտօնավարէ Ալեք Մանուկեան Վարժարանին մէջ, որպէս հանրային յարաբերութեան վարիշ: Կ'աշխատակցի ամերիկահայ «Նոր Օր», «Նոր Կեանք», «Պայքար», «Տհի Արմինիըն Ռիփորթըր», «Տհի Արմինիըն Օպըրըվըր» (վերջին երկուքը անգլիատառ) եւ այլ թերթերու: Անոր առաջին պատմական աշխատասիրութիւնը «Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական Ծարժումը» խորագրեալ գործն է, որուն կը հետեւին «Հայ-Թրքական Յարաբերութիւնները Դարերու Ընթացքին» (անգլերէն), ապա «Դօր» եւ «Հայ Յեղափոխական Դեմքեր» գործերը հայերէն, որոնք թարգմանուած են անգլերէնի:

Անդրանիկ Չելեպեանի գործերուն ընդմէջէն կ'ուրուագծուին իր նկարագրային գիծերը: Ան եղած է արթուն միտքի ու ազնիւ հոգիի տէր հայ մարդ: Չելեպեան չէ գոհացած եւ բաւականացած «քարոյական յաղթանակներ»ով միայն, այլ չգտելով ազատ եւ անկախ մնալու մտածողութեան՝ ծառայած է ազգային գոյատեւման պայքարի փշոտ ու քարքարոտ ճանապարհի գաղափարաբանութեան: Ան ոչ միայն Զօրավար Անդրանիկի կեանքն ու գործունէութիւնը ուսումնասիրած է, այլ Դրոյի եւ բազմաթիւ ուրիշ հայ յեղափոխականներուն

ալ, ըստ հնարաւորին բոլորին իսկական էութիւնը բացայայտելով: Ստորեւ մէջքերումներ Անդրանիկ Չելեպեանի գրիչէն, ծանօթանալու համար իր որոշ մօտեցումներուն:

Անդրանիկ Չելեպեան իր գիրքին սկիզբը լուսարձակի տակ առնելով հայոց ազատագրական պինեալ պայքարը ընդհանրապէս եւ Չէյթունի ինքնապաշտպանութեան դիմադրութիւնը մասնաւորաբար կ'ըսէ. «Ծաւեր կը գաղթեն [Չէյթունէն-Յ.Ի.], իսկ հողին փարողն ալ սկսած էր պինեալ ինքնապաշտպանութեան մասին մտածել եւ թօթափել իր վրայէն ստրկամտութեան գաղափարը, որ դարերու ընթացքին՝ այնքա՛ն խոր արմատ նետած էր հայ գեղջուկի մտածողութեան եւ առօրեայ ապրելակերպին մէջ» (էջ 23): Հեղինակը հետամուտ ըլլալով հայոց ազատաւնչութեան գաղափարին ներկայացման, կը գրէ վերոյիշեալ տողերը: Ազատագրական պինեալ պայքարի մասին գրուած յօդուածներն ու բանաստեղծութիւնները կը յիշէ ան, ինչպէս Սկրտիշ Պեշիկթաշեանի «Քաջորդւոյն Թաղումը», Ծահալիկի (Սմբատ Ծահալիկեան) «Լեւոնի Վիշտը» բանաստեղծութեանց փունջը, մէջքերելով անկէ բանաստեղծութիւն մը, որ կ'ակնարկէ Չէյթունի ապստամբութեան.

«Ո՛վ ապատութիւն, դու սպառապէն
Տարոս լեռներից մեկ երեւեցար,
Եւ արիւնարբու Ափիկն անօրէն
Տարաւ նշաւակ, ինկաւ չարաչար» (էջ 25):



Սորայր Մուշեղեան

Հայոց ազատագրական պինեալ պայքարին առնչուած գրական գործերէն Անդրանիկ Չելեպեան կը յիշէ Գամառ Քաթիպայի (Ռափայէլ Պատկանեան) «Մայր Արաքսին» քերթուածը, Օերենցի [Յովսէփ Օիշմանեան-Յ.Ի.] «Թորոս Լեւոնի» եւ «Տրկունք» վեպերը, Ռաֆիի [Յակոբ Մելիք Յակոբեան-Յ.Ի.] «Խենթ», «Ջելալէտտին», «Կայծեր» ու «Սամուէլ» վեպերը:

Հայկական ազատագրական պինեալ պայքարի բնորոշումն ընելով Անդրանիկ Չելեպեան կ'ըսէ, թէ Հայ Յեղափոխութեան ստեղծուելուն միակ պատճառը թրքական պետութեան անմարդկային եւ քարքարոսական վերաբերմունքն էր հայ ժողովուրդին հանդէպ:

Անդրանիկ Չելեպեան իր «Զօրավար Անդրանիկ Եւ Հայ Յեղափոխական Ծարժումը» խորագրեալ ուսումնասիրութեան մէջ ընդգրկած է Անդրանիկ Զօրավարին ֆետայիներու եւ խմբապետներու հետ յարաբերութիւնները, որոնք վերլուծական տարազով ներկայացուցած է ընթերցողին: Տրք Սերոբ Աղբիւր կը նահատակուի, ֆետայիներէն ոմանք կ'ուզեն Սեբաստացի Մուրատը իրենց ղեկավար նշանակել: Հեղինակը Անդրանիկ Զօրավարին մասին Սեբաստացի Մուրատին վկայութիւնը կը մէջքերէ, որ կ'ըսէ. «Անդրանիկն է այդ առաջնորդը. եւ թէ անգամ նա մեռած լինի, իր դիա՛կը մեր դրօշին հետ պետք է տարուի մեր առջեւէն դէպի կռիւ եւ ապատութիւն» (էջ 137):

Ֆետայիներու պետի մը ընտրութեան մասին Անդրանիկ Չելեպեան հետեւեալը կ'ըսէ. «Ղեկավարի մը փնտռտուքը տեսած էր ամիսներ: Գետրգ Ծաւուշէն եւ Սեբաստացի Մուրատէն զատ կային այլ թեկնածուներ, ինչպէս Սպղանայ Մակարը, Հրայր-Ռոմիսը (Արմենակ Ղապարեան) եւ Անդրանիկը» (էջ 139):

Ուսումնասիրող Անդրանիկ Չելեպեան Զօրավար Անդրանիկի մասին կ'ըսէ, թէ ան բացի մարտական կարողութիւններէ ունէր նաեւ դիւանագիտական ճկունութիւն եւ քաղաքական մտածողութիւն: Ժողովներու ընթացքին խմբապետները երբ առաջարկ մը կ'ընէին, անպայման կը սպասէին Անդրանիկի պատասխանին եւ վաւերացման: Սեպուհ անգամ մը կ'առաջարկէ քիւրտերն ու թուրքերը իրար դէմ գրգռել: Անդրանիկ առաջը առնելու համար սխալ արարքներու եւ ժամավաճառութեան, անմիջապէս կը պատասխանէ. «Տթէ

ԲՈՒՆ ԻՄԱՍՏՈՎ ԱՐՁԱՆԱԳՈՐԾԸ. ԽՈՐԷՆ ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԵԱՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԳԵՈՐԳ ԳԻՆԼՈՒՄԵԱՆ

Օրերս Երեւանի «Օղակաչեւ այգում» աննախադէպ չգողականութեամբ ուշադրութիւնս սեւեռուեց մի արշանի վրայ, որ «Վերածնունդ Հայաստան» է կոչում: Խորեն Տեր-Յարութեանի կերտած «Վարդան Մամիկոնեան» արշանը վետեղուած է Ֆիլատելֆի (ՄՄՆ) քաղաքի գլխաւոր պողոտաներից մէկին կեդրոնում: Անկեղծ ասած, արշանի վիճակն աննախանձելի էր, ուղիղ համեմատական այսօրուայ հայաստանեան իրավիճակին՝ վերածնունդ, բայց տկար: Եթէ չիմանաս քանդակի հեղինակին, կարող ես կարծել, որ այն պատկանում է հասարակութեան կողմից մերժուած մի մարդու, որի հետ էլ իր արշանը դատապարտուել է «դանդաղ մահուան»: Փորձեցի հետաքրքրուել՝ ո՞վ է քանդակի հեղինակը. Խորեն Տեր-Յարութեան: Իսկ ո՞վ է Խ. Տեր-Յարութեանը: Ուզենք, թէ չուզենք, այս հարցը մեզ միանգամից տանելու է հետ՝ անցեալ դար, Արեւմտեան Հայաստան, Ամերիկա, Արեւելեան Հայաստան:

Խորեն Տեր-Յարութեանը ծնուել է 1909 թ Ապիլի 2-ին, Արեւմտեան Հայաստանի Խարքերդի գաւառի Աշոտաւան գիւղում: Ծանր ու դաժան է եղել Խորենի գերդաստանի պատմութիւնը: Նրա գերդաստանը 1800-ականներին, երբ դեռ Պայայեան ազգանունն էր կրում, բախւել է ճակատագրի հաշմեցընող հարուածներից մէկին: Մի գիշեր սինուս թուրքերը շրջապատում են Պայայեանների տունը, յարակույտ, սպանում Խորենի մեծ պապին՝ Պայա Պայայեանին:

Պայայի որդիներ Կիրակոսին ու Յարութիւնին յաջողում է փախչել ու ապաստան գտնել Արաքլիրում: Երկու տարի յետոյ վերադառնալով հայրենի Ձընչոր, նրանք ոչինչ չեն գտել, բացի իրենց այրուած տան աւերակներից եւ անհետ կորած հարազատների մասին այրող յուշերից: Հետագայում հենց Պայա Պայայեանի որդի Յարութիւնից ու նրա կին Նունուֆարից պիտի ծնուէր Խորենը եւ հոր անունն իրեն ազգանուն դարձնէր՝ Տեր-Յարութեան: Խորենն իր հետագայ ողջ կեանքի ընթացքում բարձր պահեց հոր խրատը՝ «Այս կեանքում յարատեւելու համար անհրաժեշտ է ուժգին հաւատ ունենալ Աստծոյ նկատմամբ, խնամքով փայփայել համբերելու առաքինութիւնը եւ ամէն ինչին դիմանալու վճռականութիւն ցուցաբերել»:

Սակայն տեղահանումն ու դժբախտութիւնը չէին լքել Պայայեան գերդաստանին: 1914 թ. թուականին նոր թափ առած ու մէկ տարուայ ընթացքում մի բովանդակ ազգ կու տուած Հայոց ցեղասպանութեան պտուղները միլիոնաւոր հայերի հետ ճաշակեցին նաեւ Խորենն ու իր հարազատները:

Երկար տառապանքներից յետոյ, թուրքական արքայի քարանձախի մի կերպ խոյս տալով, իննամեայ Խորենը յայտնուում է քրդերի մօտ, որպէս հովիւ: Խորենի քոյրը՝ Մերիոն Տեր-Ղապարեանն իր հետագայ յուշերի մէջ պիտի գրէր.

«Տարիներ անց այս փորձառութիւնը օգտակար եղաւ Խորենի համար, երբ նա բակաւորի փայտից հասակով մէկ կերտում էր հսկայ Գողիաթին յաղթող Ռաթի կերպարը («Ռաթի» եւ Գողիաթ») : Տեւական ժամանակ մնալով քրտերի մօտ, Խորենը յայտնուում է Ալեքսանդրապոլում, եւ իրենց ընտանիքի բարեկամ Սուրբ Փրկիչ ազգային հիւանդանոցի նշանաւոր վիրաբոյժ Պաղտասար Մանուէլեանի օգնութեամբ տեղաւորում Գարագեօպեանի արական որբանոցում:



1921 թ. Խորենն իր ընտանիքի հետ յայտնուում է ՄՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ուստըր քաղաքում: Նոյն տարուայ ամռանը Խորենն իր երկու քոյրերի հետ յաճախում է տեղի՝ տարբեր ազգութիւններին պատկանող դպրոցը:

«Մեր ուսուցչուհին օրիորդ Քոնուէրին էր՝ չար ու դժուարահաճ անձնաւորութիւն... :

... Մի օր, ամերիկեան դրօշի հանդէպ երդումը տալուց անմիջապէս առաջ, օրիորդ Քոնուէրին յանկարծ արագօրէն դէպի Խորենի նստարանը քայլեց, սցուեց նրա կողքին եւ փորձեց քանոնով հարուածել նրան՝ բղաւելով. «Վերադարձի՛ր, օտարերկրացի: Վերադարձի՛ր այնտեղ, որտեղից եկել ես» , - յիշում է Խորենի քոյր Մերիոնը:

Ոնդհանրապէս դժուար է եղել Խորենի մանկութիւնը: Մի անգամ դպրոցի երախաները ծեծում են նրան՝ անուանելով գնչու, թուրք, մոնղոլ եւ այլն: Դրանից յետոյ Խորենը որոշում է բռնաբարտուած վրէժախնդրութեամբ վերադառնալ իր հայրենիքը: Որոշ ժամանակ անց մեծ աղմուկ է բարձրանում. Խորենը ծեծել էր իր եթնիկ արժանապատ-

ութիւնը վիրատուողներին ու սեղանները շրջել նրանց վրայ:

Նոյն քաղաքում աշխատանքի անցելով, Խորենը դառնում է կօշիկ մաքրող, որոշ ժամանակ անց՝ Ուստըրի «Հեռագրեր եւ լրագրեր» գործակալութեան համար լրագրեր վաճառող՝ Մեյն եւ Չանդլեր փողոցների անկիւնում: Շատ կարճ ժամանակում Խորենը դառնում է փողոցային վաճառքի վերա-

հսկիչ Լուիս Գահնի սիրելի տղաներից մէկը:

Հենց Մեյն փողոցն էր, որ պետք է դառնար Խորենի ու արուեստի երջանիկ բախման անմեղ մեղաւորը: Իր դպրոցական կեանքի առաւօտներից մէկում նա նկատեց այդ փողոցում գտնուող նկարչի խանութը: Արագ մտերմանալով նկարչի հետ, պատանի Խորենն սկսում է ընդօրինակել նրան ու կարճ ժամանակում յաջողում վարմացնել վարպետին. Խորենն արդէն նկարիչ էր, միաժամանակ... եւ քանդակագործ:

Սիւս այստեղից, երբ նա նկարիչ է, քանդակագործ ու գույն էլ աւելին, ասելիքը տրուում է արուեստաբանին, որ արդէն տասնեակ տարիներ լուծում է, նաեւ որի լուծեան պատճառով այսօր Խորեն Տեր-Յարութեանի նման ուղնուծուծով մշակութաստեղծ մարդը դատապարտուել է մոռացութեան եւ «յոյսը դրել» ինչ նման՝ արուեստի մասին թուուիկի գիտելիքներ ու անհիմն պնդումներ ունեցող մէկի վրայ:

Ես միայն կարող եմ ասել, որ այն, ինչ հիմա պտտում է Տեր-Յարութեանի շուրջը, այն է՝ մոռացութիւն:

Ծիշդ է աւուած՝ չորը դատարկ, աղուէնը տէր: Այսօր, երբ Տեր-Յարութեանի պէս մարդիկ մոռացուած են, երբ Սարեանին յիշում ենք լոկ այն ժամանակ, երբ ժամադրութեան ենք գնում նրա անունը կրող այգում, երբ Բաբաջանեանն ուղղակի ընդգծուած արծուաքթով քարակերտ է, երբ Թումանեանը «շաուրմա» է, երբ Կոմիտասը փողոց է եւ այդպէս շարունակ, մեր գլխին են թափուել ինքնաշեն քանդակագործներ, երաժիշտներ, գրականագետներ, հրապարակախօսներ ու այլք, որոնք գրաւում են աթոռներ, որ մի ժամանակ պատկանել են վերոբերեալ երանելի մարդկանց, որոնց մոռացել ենք, անտեսել ենք առանց ամօթի: Այդ ամէնի պոհն է նաեւ Խորեն Տեր-Յարութեանը: Մարդ, որի մասին անցեալ դարում հայ քանդակագործութեան տիտաններից մէկը՝ Երուանդ Քոչարն ասել է.

«Սիրելի Խորեն, դու իրօք շատ «խորեն» ես մօտենում քո գործին, արուեստի շնչով իմաստաւորում ես չէր: Հայ արշանագործութեան պատմութեան մէջ՝ սկզբից մինչեւ մեր օրերը, ես առաջին անգամ եմ տեսնում մի արշանագործի, որ իր հայութիւնը առնչում է համաշխարհային արշանագործութեան հետ: Ընտրահալալութիւն, սիրելի Խորեն: Դու հայ ես, լաւ, ապնիւ հայ ես, քո սիրտը օտար ափերում տրոփում է հայաՎարի...»



Խորեն, դու բուն իմաստով արշանագործ ես, իսկական հայ արշանագործ»:

Գրութիւնս բացեցի վարպետի՝ «Օղակաչեւ այգում» գտնուող «Վերածնունդ Հայաստան» արշանի մասին տողով: Վստահօրէն գիտեմ՝ ովքեր են մեր երկրի յուշարշանների պատասխանատուները, բայց վստահ չեմ, որ նրանք վստահօրէն գիտեն՝ ո՞վ է Խորեն Տեր-Յարութեանը եւ ինչ է նշանակում Վերածնունդ Հայաստան: Այդ արշանի գաղափարն այնքան խորն է, այնքան ազգային, որ նրա ներկայ վիճակն ուղիղ արշագանգն է մեր ներկայ հոգեկերտուածքի ու արուեստի մօտեցման:

Եւ Խորեն Տեր-Յարութեանը միակը չէ այս մոռացութեան լաբիրինթոսում, մեր ժողովուրդն իր լաւ ու ընտրեալ պաւկներին մոռանալու մեծ փորձ ունի, այդ երեւոյթը արդէն դարեր շարունակ մեզ համար դարձել է հասարակ, աննշան մի բան, այնինչ...

Հայաստանը չի ճանաչում իր պաւկներին, որից էլ անվերջ տուժում է, եւ շարունակելու է տուժել: Այդ պաւկների թուին է պատկանում նաեւ Խորեն Տեր-Յարութեանը՝ Ամերիկայում ճանաչուած քանդակագործ, Հայաստանում, ցաւալի է, բացի Վաղարշապատի բնակիչներից, որոնց քաղաքում է գտնուում նրա անունը կրող թանգարանը, ոչ ոք: Աւելի ցաւալի է այն, որ շատերի կողմից քննադատուող ԽՍՀՄ-ն աւելի բարեացակամ ու յարգալից է վերաբերուել Խորեն Տեր-Յարութեանին, քան արդէն իր անկախութեան երրորդ տասնամեակը բոլորած Հայաստանի Հանրապետութիւնը: Պետութիւնը պետք է յստակ որոշում կայացնի Խորեն Տեր-Յարութեանի նման մարդիկ մեզ պէ՞տք են, թէ՞ ոչ:

Յուսով եմ՝ մեր մշակոյթի պատասխանատուները վերջապէս կանեն այն, ինչին կոչուած են եւ բազմաթիւ յանիրաւի մոռացեալների հետ պատշաճ ուշադրութեան կ'արժանացնեն նաեւ Խորեն Տեր-Յարութեանին, մի խոշոր արուեստագետի, որն իր արշանների ու քանդակների ողջ հաւաքածուն բերեց ու նուիրեց Վերածնունդ Հայաստանին: Նոյնանուն այդ արշանը լքուած է այսօր Օղակաչեւ այգու կեղտոտ ջրաւապաններից մէկում, Կրիպոյետովի արշանի յետնամասում, նորամասնով Հայաստանի խորհրդանիշ հայ պատանու կտրած անդամով...»:

Երեւան

Յո՛ւճե՛ր՝ Ղե՛ցեալ է՛ն

Երազային Ճամբորդություն մը...

Երեւան, Մոսկուա եւ Լենինկրատ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Երազային այս ճամբորդութիւնը տեղի ունեցաւ 1971-ի Չատկուան արշակուորդի 10-ը օրերու ընթացքին: Պէյրութի Սովետական Միութեան պօսաշրջիկութեան գրասենեակի կամակերպութեամբ՝ առիթը տրուեցաւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն 200 ուսանողներու շրջագայելու եւ այցելելու վերոյիշեալ քաղաքներուն տեսարժան վայրերը: Յիշեմ որ այդ տասը օրերու ընթացքին՝ մենք առաւելագոյն կերպով վայելեցինք այդ քաղաքներու յատուկ մշակութային հարստութիւնը:

Ուսանողները բաժնուեցան երկու խումբի: Քանի որ առաջին խումբի 100 ուսանողներէն 60-ը հայեր էին, անոնք պիտի այցելէին Երեւան, Լենինկրատ (այժմու՝ St. Petersburg) եւ Մոսկուա: Իսկ մնացեալ 100 ուսանողները պիտի այցելէին Քիւեւ, Լենինկրատ եւ Մոսկուա: Մենք առաջին օդանաւով գացինք Երեւան, որմէ ետք նոյն օդանաւը պիտի վերադառնար Պէյրութ եւ երկրորդ խումբը տանէր Քիւեւ:

Հետաքրքրական այս ճամբորդութեան աւարտին իմացանք որ երկրորդ խումբի ծրագրէն Քիւեւ ջնջուած էր ու անոնք այցելած էին միայն Լենինկրատն ու Մոսկուան:

Երեւան



Գալով մեր խումբին, երբ Երեւան հասանք՝ մեզ տեղաւորեցին Արաբկիր պանդոկը: Մեր խումբին մաս կը կազմէին Կրէյս Վարպետեանը, Միմի Մէնշեանն ու Վահէ Աբելեանը՝ ի միջի այլոց:

Բարեբախտաբար մօրաքրոջս տղան Երեւան կ'ուսանէր եւ ան եղաւ իմ փորձառու առաջնորդս, Երեւանի տեսարժան վայրերու այցելութեան: Անշուշտ գացինք Սբ. Էջմիածին, Երեւանի գոյ շուկան, Հրազդան մարզադաշտը ու տեսանք Մայր Հայաստանի բաշրադիր արշանն ու Ծիծեռնակաբերդի նահատակաց Յուշարչանը: Իսկ գիշեր մըն ալ վայելեցինք Այիտա օփերան, Նար Յովհաննիսեանի խաղարկութեամբ:

Մենք այցելեցինք նաեւ Մօրս մօրաքրոջ ընտանիքին, որ 1948-ին Հալեպէն գաղթած էր Երեւան: Մօրս մօրաքրոյը մեռած էր, սակայն ամուսինն ու վաակները ողջ էին: Սրբեք պիտի չմոռնամ մօրս ալեհեր քեռայրին յուզումնալից խօսքերը, «Տղաս, մենք չենք կրնար Հայաստանէն դուրս գալ: Դուք՝ մէկ առ մէկ եկէք, որ չեր կարօտը առնենք . . . »:

Լենինկրատ



Մեր յաջորդ կայքը Չարերու մայրաքաղաք Մէյնթ Փիթըրսպուրկն էր, որ Սովետները վերանուանած էին Լենինկրատ: Մենք այցելեցինք այդ քաղաքի կարեւոր տեսարժան վայրերէն երեքը: Հերմիթաժ թանգարանը, Սուրբ Յա-

ԳԵՈՐԳ ԹԵՕԾԿԷՐԵԱՆ

րութիւն եկեղեցին եւ Ամուսնութեանց պալատը:


Պետական Հերմիթաժ թանգարանը հսկայ համալիր մըն է որ կ'ընդգրկէ նաեւ Ռուսիոյ Մեծն Պետրոս Չարի չմեռնային պալատը: Անկարելի է որ մէկ օրէն որեւէ մարդ կարենայ շրջիլ այդ թանգարանը եւ ամբողջովին ըմբռնանել, հոն ցուցադրուած թանկագին իրերու անսովորական վայելքը: Այդ թանգարանը՝ կրնամ ըսել, որ աշխարհի հրաշալիքներէն մէկն է:

Գալով Սուրբ Յարութեան եկեղեցիին, տեղացիները վայն կը ճանչնան որպէս «Փրկչի Եկեղեցին որ կառուցուած է Հոսած Արիւնի վրայ»: Այսինքն, Church of the Savior on Spilled Blood.

Այս եկեղեցին շինուած է այն վայրին վրայ ուր 1881-ին՝ Ռուսիոյ ամենասիրուած Ալեքսանտր Երկրորդ Չարը զոհ գնաց ոճրագործի մը արշակած ռումբին: Այդ եկեղեցիին արտաքին պատերը պարզարուած են 20 որչաքարէ (granite) փսեւններով, որոնք կը նշեն զոհուած Չարի իշխանութեան օրով տեղի ունեցած կարեւոր իրադարձութիւնները:

Ամուսնութեանց պալատը այն հոյակապ շէնքն է, որուն ներսը շատ գեղեցիկ կերպով պարզարուած է: Այդ պալատը կը ծառայէ քաղաքական ամուսնութիւն կնքելու հանդիսութեանց: Սրբ ներս մտանք տեսանք մեծ թիւով զոյգեր՝ իրենց ամուսնական տարազներով, որոնք երկրորդ յարկ բարձրացող աստիճանին վրայ կարգի կեցեր էին... Պահը այնքան լուրջ եւ յուպիչ էր՝ որ մեր մէջ ալ արթնթույ ամուսնանալու ներքին փափաք մը...

Մոսկուա



Լենինկրատէն ուշ երեկոյեան շոգեկառքով ճամբայ ելանք դէպի մայրաքաղաք Մոսկուա: Բարեբախտաբար մեզի տրամադրուած էին անկողինով սենեակներ եւ մենք յոգնած ըլլալով՝ կարողացանք քնանալ եւ հանգստանալ: Սրբ առաօտեան մեր աչքերը բացինք՝ մեզի հրամցուցին տաք թէյ եւ արդէն կը գտնուէինք Մոսկուայի արուարչանները:

Մոսկուայի մէջ մենք այցելեցինք հետեւեալ կարեւոր վայրերը: Կարմիր հրապարակն ու Լենինի դամբարանը, Մոսկուայի նշանաւոր համալսարանը եւ առիթը ունեցանք վայելելու Պուլշոյ պալէի ու Մոսկուայի մեծագոյն կրկեսի ելոյթները: Մենք մեծապէս տպաւորուեցանք փապուդիի (մեթրօ) կայաններու մաքրութեամբ ու վարդարանքով, կարծես իւրաքանչիւրը՝ մեկական պալատական գաւիթներ ըլլային . . .

Պուլշոյ պալէն ներկայացուց The fountain of Bakhchisaray, որուն բառերը հիմնուած են Պուշքինի բանաստեղծութեան վրայ: Ծառ հետաքրքրական էր Մոսկուայի համալսարանի մեր այցելութիւնը: Արդարեւ, վերադարձին մենք տեսանք որ մարդիկ սառած գետին վրայ ծակ մը բանալով, վար կը սուզուէին եւ կը լողային: Չարմանալիօրէն՝ վայս տեսնելով, մեր տաքուկ ինքնաշարժին մէջ նստած՝ պաղ սառսուր մը անցաւ մեր մարմնին մէջէն:

Մոսկուայի կեցութեան մեր վերջին գիշերը յիշատակելի պահ մը հանդիսացաւ տասնօրեայ մեր այցելութեան ընթացքին: Արդարեւ՝ այդ օրուան ընթացքին, ես եւ մեր խումբէն բարեկամ մը առիթը ունեցանք տեղացի երկու օրիորդներ հրաւիրելու ճաշի: Փոխադարձաբար ալ անոնք գիշերը մեզ հրաւիրեցին իրենց տունը՝ ընթրիքի:

Խորհեցանք որ պարապ չեռքով չերթանք, ուստի որոշեցինք բան մը տանիլ մեր հետ: Ծամբան տեսանք պտուղ ծախող կրպակ մը: Մօտեցանք եւ չեռքս խնչորին մատնանշելով, երկու մատերս ցոյց տուի: Կինը երկու խնչոր տուաւ... «Քիլօ» ըսելով՝ միտքս պարզեցի որ երկու քիլօ խնչոր կ'ուզեմ: Սրբի ըսի, հոս քիլոյով խնչոր առնող չկայ:

Փաստինա

ԱՆՀԱՆԳԻՍՏ ԿՈՎԿԱՍ.

ԻՆՉ ԴԵՐՈՎ ԹՈՒՐԲԻԱՆ ՄՏԱԾ Է «ՆՈՐ ԽԼՂ»ԻՆ ՄԵՏ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին


ՄԱԳՕ ԱՐԵԱՆ

Երեւանի մէջ յետպատերազմեան խօսակցութիւններու ծիրին մէջ, քիչ չեն անոնք, որ կը հաւատան, որ անցեալ սեպտեմբերին ընթացք առած ծանր պատերազմը այս արդիւնքով չէր աւարտեր, եթէ Պաքու չունենար այն նեցուկը, որ Անքարան տուաւ իր հին-նոր գործընկերոջ:

Եւ եթէ վայրկեանի մը համար մէկ կողմ դնենք թրքական զենքերու «առատ» մատակարարման խնդիրը, թրքական բանակի կարգ մը ազդեցիկ սպաներու այս պատերազմին մասնակցութեան փաստին ու նաեւ Սուրիայէն դէպի Ատրըպէյճան հասնող վարչական-ահաբեկիչներու խնդիրը, ապա բոլոր ապացոյցները մեզի կը տանին այն փաստին, որ Թուրքիան այս «խաղ»ին բոլորովին նոր չեւաչափով եւ բաւականին նոր պատուհանէ մը «ներս» կը մտնէ:

Այստեղ անշուշտ յիշեցման կարգով պէտք է անպայման շեշտել, որ Արցախի առաջին պատերազմի օրերուն ալ այդ երկիրը դէպքերու եւ վարձագումներուն կուգահեռ ունեցաւ հակահայ կեցուածք, բայց եւ այնպէս այդ օրերու Անքարայի ունեցած դերակատարութիւնը, նոյնը չէր, ինչ որ տեղի ունեցաւ անցնող օրերուն:

Այստեղ անշուշտ երեւելի կը դառնան, երկու կարեւոր փաստեր, որոնց մասին ալ կարելի է շատ երկար խօսիլ ու մտորել:



Առաջին հիմնարար փաստն այն է, որ Թուրքիա այսօր առաջուան Թուրքիան չէ: Այդ երկիրը, ոչ թէ միայն ուժեղ եւ կեղ-րոնական դեկաւար ունեցող երկիր է, այլ նաեւ ունի ռազմա-քաղաքական մեծ համակարգ մը, որ որոշիչ մեծ ներուժ կը դառնայ նոյն իշխանութեան չեղքը եւ առաջ կը տանի Անքարայի քաղաքական իշխանութեան կամքը:

Անքարայի այս դերը եւ դերին տարողանակութիւնը անտես ըրինք առաւելաբար մենք հայերս:

Տեսանք, թէ այդ երկիրը, ինչ մեծ ռիսքերու դիմելով եւ արդէն քանի անգամները մուտք գործեց Սուրիա եւ ամենատարբեր պատրուակներ մէջտեղ դնելով, կարողացաւ իր ոտքերը «կարծրացնել» արդէն իսկ տաս տարիէ ի վեր արիւնահեղ դարչած Սուրիոյ մէջ: Նոյն պատկերը, եւ անշուշտ տարբեր չեւաչափերով Թուրքիան կատարեց Լիպիոյ մէջ ու այդտեղ, տարբեր հանգամանքներու բերումով «ետդարչ» մ'ունենալէ ետք, անցաւ Կովկասեան ճակատին եւ ամէն ճիգ ի գործ դրաւ, որ Պաքուի «հին-նոր» երազները իրականութիւն դառնան:

Մնացածը, բոլորս գիտենք, մեծ արիւնայեղութիւն, վիրաւոր Հայաստան եւ Արցախ, բիրաւոր նահատակներ, ամեհի նիւթական-բարոյական վնասներ եւ մէկ խօսքով աղետալի հետեւանքներով աւարտած ծանր պատերազմ: Այստեղ հեռու մնալով դաւադրական մօտեցումներու ընդհանուր պրիսմակէն, հարկ է անպայման ամրագրել, որ Թուրքիոյ «մեծ աճ»ին դիմաց Մոսկուան առաջուան նման «սաստող» կամ «կանխող» դերի մը մէջ չէ:

Կամ որոշում կայ, ամէն գնով հեռու մնալ թուրք-ռուսական մեծ եւ երկու կողմերուն համար աւերիչ եւ պատուհաս հանդիսացող պատերազմէ, կամ ալ կան խաղի որոշ կանոններ եւ «կարմիր գիծեր», որոնք յարգուած են եւ պիտի յարգուին երկու հիմնական խաղացողներուն կողմէ: Ի դէպ նոյն գերլարումը մենք նկատեցինք 2019 թուականի մարտին, երբ Սուրիոյ մէջ զգալի դարչած «խլրտումներ»էն եւ ռուսական ու սուրիական բանակին կողմէ թիրախ դարչած թրքական ոյժերը յայտնուեցան բաւական բարդ դրութեան մը մէջ, որուն հետեւանքով ալ ՌԷՖԵի Թայեպ Էրտողան ստիպուած եղաւ «լքել» ամէն օրակարգ եւ փութկոտութեամբ մը հասնիլ Սէյմ Փեթերսպուրկ:

Այդ օրերուն էր նաեւ, որ միջազգային լրասփիւռներ մեծ տեղ յատկացուցին այդ այցին ու նաեւ քննարկութեան նիւթ դարչուցին, թէ Ռուսաստանի առաջնորդը, ինչպէս կարողացաւ Էրտողանը «նեղ կացութեան» մատնել, զինք սպասցնելով եւ նախատեսուած հանդիման ներկայանալով քիչ մը ուշ:

Անշուշտ այդ այցի ընդհանուր մանրամասնութիւններուն մէջ կային նաեւ այլ հետաքրքրական փաստեր, որոնց ամենէն «աչքառու»ն այն էր, որ Փութին իր թուրք հիւրերը սպասել տուած է, ռուս-թրքական բոլոր պատերազմներուն ընթացքին թուրքերը «ծունկի բերած» եւ ռուսաստանեան յաղթանակներու խորհրդանիշ հանդիսացած զօրավարներու անունով «կնքուած» սրահներու մէջ, ուր կային նաեւ այդ զօրավարներու կիսանդրիներն ու պատկերները:

Այդ բոլորն անշուշտ պատահական դրուագներ չէին ու անոնք կ'ամրացընէին այն վարկածը, որ Մոսկուայի համար «անմարսելի» կը շարունակէր մնալ սուրիական երկինքին ռուսական կործանիչի խոցման դէպքը, կամ Թուրքիոյ մէջ Ռուսաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Անտրէյ Բարլովի սպանութեան դէպքը (2016):

Այս բոլորն անշուշտ աւելի քան կարեւոր են, հասկնալու համար թէ ի՞նչ հարթութեան եւ կամ ինչ տրամադրութիւններու հիման վրայ Մոսկուա եւ Անքարա «կը համակարգեն» ընդհանուր խաղը:

Այդ խաղին մէջ կայ ատելութիւն, դիւ, եւ քէն, սակայն կողմերը շատ լաւ կը հասկնան, որ եթէ կողմերէն մէկը խախտէ «խաղի կանոններ»ը ապա վարձագումները կրնան այնպիսի ընթացքով մը առաջ երթալ, որ բախման հետեւանքները, դարչեալ երկու կողմերուն համար կը դառնան աննախատեսելի եւ նոյնիսկ անդարմանալի:

Ու շատ հաւանաբար այս տուեալները հաշուի առնելով է, որ երկու կողմերը մասնաւորապէս Արցախեան պատերազմի ամենատաք օրերուն կարողացան համընդհանուր պատերազմի մեծ վտանգը հեռու պահել ու նաեւ ստեղծել այնպիսի ընդհանուր տրամադրութիւն, որ մեծ հաշուով Արեւմուտքի կողմէ յայտօր ալ կը համարուին անընդունելի եւ նոյնիսկ անմարսելի:

Այստեղ եզրակացութեան մը հասնելու համար պէտք է անպայման արչանագրել, որ Անքարա մեծ թափով մտած է Կովկասեան «նոր խաղ»ին մէջ ու իր ներկայութեան ու նաեւ խուսանաւումներուն մեծագոյն «հովանաւորը» Մոսկուան է:

Առանց Մոսկուայի, մինչեւ երեկ «տերեւ չէր շարժեր» Կովկասի մէջ, այսօր սակայն բոլորին համար պարզ սկսած է դառնալ, որ այլեւս Մոսկուան առանձին չէ բացուած խաղին մէջ, որուն հանգուցային կէտերը առնուապէն կարճաժամկէտ դրուածքի վրայ պիտի շարունակեն մնալ թէժ եւ լարուած:

«Նոր Կովկաս» եւ ... Երեւանի «անորոշութիւն»

Մտանք մարտ ամիս: Սահմաններուն ռազմական նոր գործողութիւններ չկան, իսկ այն խօսքերը եւ վերլուծումները, ըստ որոնց Հայաստանին նոր պատերազմ կը սպառնայ, ըստ երեւոյթին եւ ստեղծուած նոր պատկերին անհիմն են:

Ճիշդ է անշուշտ, որ մինչեւ այս պահը եւ մանաւանդ Արցախեան կտրուածքով վերջնական հանգուցալուծում, կամ ինչպէս քաղաքական ընկալումով կ'ըսենք՝ «Արցախի վերջնական կարգավիճակ»ը տակաւին պարզ ու յայտնի չէ, սակայն մեծ հաշուով ռազմական մեծ գործողութիւններու էջը փակուած է:

Կրնա՞յ Թուրքիան նոր պատերազմ հրահրել, կամ առհասարակ Անքարա պիտի փափաքի նոր «ճակատ» մը բանալ, այն պահուն, երբ տակաւին բաւական սուր խնդիրներ ունի իր շրջապատին հետ:

Սուրիա, Լիպիա, Միջերկրականի ջուրեր, Եգիպտոս եւ Պարսից Ծոց Էրտողան այս բոլոր երկիրներուն հետ ալ մեծ խնդիրներ ունի ու բաց աստի մինչեւ այս պահը տակաւին յայտնի չէ, որ Թուրք-ամերիկեան արդէն «ծերացած» յարաբերութիւններու ընթածիրը, ինչ որակի առազաստներով պիտի ընթանայ:

Այս բոլորը ի մտի ունենալէ ետք, արդէն իսկ յստակ կը դառնայ, որ ռազմական նոր ճակատ մը բանալու Թուրքիոյ հնարաւորութիւնները այդքան ալ մեծ չեն:

Ու եթէ այս վարկածին վրայ աւելցընենք, որ Կովկասի առընթեր երկու մեծ տէրութիւններուն՝ Ռուսաստանի եւ Թուրքիոյ շահերը, ինչ որ տեղ եւ իրար չհանդիպելով հանդերձ չեն ալ բախիր, ապա պէտք է ընկալել ու հասկնալ, որ անոնք Կովկասի համար նախատեսած են նոր իրավիճակ մը, որուն բնորոշումը կատարելով կարելի է առնուապէն ըսել, որ Կովկասը նոր ուղղութիւն մ'ունի, կամ ալ մենք ականատես պիտի ըլլանք «Նոր Կովկաս»ի մը, որուն մասին ակնարկութիւններ կատարեցին եւ Վ. Փութին եւ ալ Ռ.Թ. Էրտողանը:

Ու եթէ այս նոր իրավիճակը հաշուի առնենք, ապա պիտի նկատենք, որ գալիք գործընթացներուն մէջ ամենէն մեծ «բացակա»ն Հայաստանի Հանրապետութիւնն է:

Թուրքիան ամրագրած է իր նոր դերը, Մոսկուա գոհ է, որ «ֆիզիքապէս» ներկայ է Կովկասի մէջ (աւելի քան, ինչ որ էր նախքան Արցախի պատերազմը), Ատրպէյճան «մոլեգին» կերպով անցած է իր բռնագրաւած տարածքներուն մէջ նոր ծրագիրներ իրականացնելու քայլերով, իսկ Հայաստան երկիրը ինկած է մեծ անորոշութեան մէջ:

Անորոշութիւն, ոչ միայն ներքին ճակատին վրայ, այլ անորոշութիւն եւ նոյնիսկ անճարակութիւն արտաքին ճակատին վրայ:

Հայաստան մոռցած է իր բարեկամն ու թշնամին ու անոր թիւ մէկ պատասխանատու համարուող վարչապետը իրերը իրար խառնելով անցած է ռազմավարական միակ դաշնակցի զենքը անիծելու անընդունելի գործին:

Տարբեր մակարդակներու վրայ տեղի ունեցող շփումները, Եւրոպայէն ինչ որ յոյսեր ակնկալելու այս վարչակարգի մօտեցումներն ու աւարտին ամերիկեան նոր վարչամեթոդային Կովկասի մէջ «ինչ որ բաներ» ընելու ակնկալութիւն ունենալու կարճատեսութիւնը Հայաստանը դարչուցած են անորոշ ու մանաւանդ գործընթացներէն «բացակայ» երկիր մը դառնալու ախոյեան:

Ու մեծ հարց, այս վիճակը, ինչքան կրնայ տեսել, յատկապէս, որ ժողովրդային նեցուկին վրայ ապաւինած Փաշինեան եւ իր ընկերները, երբեք ալ չեն նկատեր, ու չեն ուզեր տեսնել, որ աւելիով կը խրեն մեզ ցեխի եւ տիղմի մեծ ճահիճներուն մէջ:

Կովկասը պիտի ապրի, վստահօրէն պիտի ապրի, կարեւորն այն է, որ մենք, որպէս արժանապատիւ պետութիւն դեր պիտի ունենա՞նք այդ «Նոր Կովկաս»ին մէջ:

Երեւան

ԸռՈՒ ՑԱՆԵՐ ՈՒ ՎԱՅՐՈՂ ՅՈՂՄԵՐ

Ես աղանդաւորների նկատմամբ վատ վերաբերմունք չունեի, բայց երկրում վտանգաւոր այս աղանդի շեւաւորման հարցում, խնդրում եմ, ինչ ներքե, ես դարձել եմ անհանդուրժող: Իրենցից ոչինչ չներկայացնող մարդիկ յաճախ այնպիսի քննադատումների են բռնում, որ դժուար է հաւասարակշռութիւն պահպանել: Փողոցի անդաստիարակ մտածողութեամբ մէկը յայտնում է քո միջավայրում ու անպայման ուզում է քեզ հետ քաղաքական իրավիճակ քննարկել: Երեք բառից յետոյ աչքերը փակում է եւ առանց լսելու դիմացինին սկսում է բարձրաձայն եւ արագ խօսել նախկիններից, թաւանից, երկիրը քանդելուց եւ այն բաներից, որոնք տարիներով նախկին ընդդիմադիրները մորֆինի նման լցրել են ուղեղներում:

Դիցուք այդպէս է, բայց հիմա մենք խօսում ենք այս ժամանակաշրջանի արհաւիրքի մասին, լաւ տեխնոլոգիաներով իրականացուած իշխանափոխութեան մասին, մերժեցիք ամենքին եւ ամեն ինչ, եկաք պրոյից սկսելու չէր քաղաքական գիծը ու տարաք կործանման:

Ծուրջ երեք տարի սիրոյ հանդուրժողականութիւնը վերածուեց խորը ատելութեան միմիանց նկատմամբ, անհեթեթ արտաքին եւ ներքին հաղորդակցային ուղերձները փոխեցին մեր յարաբերութիւնները արտաքին աշխարհի հետ, ներքին քաղաքական անկայունութեան բերեցին:

Տրուած ազդակները թշնամուն մղեց գործողութեան, սկսուեց պատերազմ, կորցրեցինք մեր լոյս տղաներին յանուն նրա համար, որ չասեն Նիկոլն առանց պատերազմի հող յանձնեց:

Մանկամիտ, անկարող, կիսագրագետ, վերլուծելու կարողութիւն չունեցող մարդիկ զբաղեցրին պաշտօններ, որոնց մասին երազում անգամ կարող չէին տեսնել: Ու երեք տարի բոլոր ոլորտներում անգործութիւն է, սխալը սխալի յետեւից է կատարում, ոլորտներ կան, որ ամբողջութեամբ ճահճի մէջ են յայտնուել, երկար ժամանակ կը պահանջուի վերականգնելու համար: Բոլոր ոլորտներում ճգնաժամ է, պէտք է արագ թափ տանք մեզ, որ առաջ շարժուենք, փակենք այս ողբերգական եւ ցաւալի սեւ էջը, բայց դրա համար պէտք է, որ Նիկոլ Փաշինեանը հեռանայ եւ շեւաւորուած այս աղանդը սկսի սովորել, կրթուել, ինքնուրոյն մտածել, թէ չէ ինչ նման մարդկանց օրկանիզմի բոլոր բջիջներն ընդվզում են ...:

ԱՍՏՂԻԿ ԱՌԵՏԻՍԵԱՆ
Երեւան

Կիրքը, ատելութիւնը, վրեժխնդրութիւնը, փառամոլութիւնը, ինքնասիրահարուածութիւնը վերջնական պիտի կործանեն հայոց առանց այդ ալ տկար փոքրացած հայրենիքը:

Միայն հանդուրժողութեամբ բարի տրամադրութեամբ կարելի կ'ըլլայ դուրս գալ այս տխուր վիճակէն:

ԶՕՐ. ՆԱՐԵԿ ԱՌԱՀԱՄԵԱՆ
Պէյրուք

Այսօր Հանրապետութեան Հրապարակում բացակայում էր երիտասարդութիւնը, ով հաւատաց Նոր Հայաստանին, բայց ում սկզբում օգտագործեցին, յետոյ խաբեցին, իսկ այնուհետեւ հագցրեցին պարտուողի արտահագուստ:

Այսօրուան բացակայութիւնը կարեւոր ու բազմանշանակ բացակայութիւն էր, քանզի նոր սերունդը իրաւունք ունի երազել, պահանջել ու ՄԱՆԱԼ իրական ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ՝ մերժելով 2018ից առաջ եղածն ու «դուխով» հրամցուածը ...

Ու կասկած չունեմ, որ իրենք շուտով յաղթելու են ու հասնելու են իրենց նպատակներին:

ՀԱՅԿ ՏԵՄՈՅԵԱՆ
Կիւմրի-Երեւան

Հայաստանին պէտք է կայունութիւն, ներքին եւ արտաքին խաղաղութիւն: Սա պէտք է հասկանան թէ՛ իշխանութիւնը, թէ՛ ընդդիմութիւնը: Չի կարելի ոչ մի դէպքում հանդուրժել որեւէ տեսակի ցնցում: Ծանապարհը, կարծում եմ, փոխադարձ երկխօսութեամբ ու փոխհամաձայնութեամբ կազմակերպուած նոր ընտրութիւններն են: Այսպէս շարունակել չի կարելի: Հայաստանի մնայուն շահը պէտք է բացարձակապէս վեր դասուի: Մնացած ամեն ինչ պէտք է ստորադասուի պետական գերագոյն շահին:

ՄԵՐՈՎՔԷ ԵՊՍ. ԻՍԱԽԱՆԵԱՆ
Քեօլն (Գերմանիա)

Երկար սպասեցի որ մարդիկ հասնին ու հասկցայ թէ սպասելուն մէջ ոյժ մը կայ, համբերութենէ աւելի խիզախութիւն է սպասելը, իսկ համբերութիւնն ալ խիզախութիւն է որուն արժանի է կեանքը, կեանքը իմաստալից եւ հաճելի, կեանքը արժանապատիւ, նպատակասլաց:

Սպասելուն մէջ փնտռտուք մը կայ, մութին մէջ անգամ լոյսի փնտռտուք, պայծառ դէմքեր գտնելու, բարի եւ խրոխտ սրտեր գտնելու, բայց մութին մէջ միայն կարմիրն է արդէն որ կ'երեւայ, կը յամենայ ու կը տիրէ որ շուտով կը թափի, եւ երեկուան փայլուն դէմքերուն վրայ ու բարի սրտերուն մէջ ատելութիւն կը ծորայ, ուր կը մեռնի ամեն փնտռտուք, եւ հոն չկայ այլեւս սկզբունք, սուտ կը դառնայ ամեն սպասում, սուտը անիծելու մութը՝ բայց ողջունելու խաւարը:

Օրին ընկերս հարց կու տար թէ՛ սուտը անիծելու մութը՝ բայց ողջունելու խաւարը:

Օրին ընկերս հարց կու տար թէ՛ եթէ լաւ է ամեն բան ուրեմն ինչո՞ւ է այսքան վատ, խոժոր ու մութ ու խաւար: Հիմա եթէ ան հոս ըլլար կը հասկնար թէ վատին աւելի վատն ալ կայ՝ ոճիրներու ոճիրը գոյութիւն ունի որ մարդ սպաննելու փոխարէն մարդոց յոյսը կը սպաննեն, ու արդէն անիմաստ կը դառնայ ամեն սպասում եւ համբերութիւն, քանզի հոն կայ մէկ ճշմարտութիւն՝ լոյսի ուղղութեամբ յոյսը վառ պահելու խենթութիւն:

ՎԻՊԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Պեվըրլի Հիւլ, Գալիֆ.

ԵՒՍ ՄԷԿ ՀԱԿԱՀԱՅ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 100-ԱՄԵԱԿԸ ԿԸ ԼՐԱՆԱՅ՝ ՖՐԱՆՍ-ԹՐՔԱԿԱՆ

Էրտողան խորհուրդ տուած էր նախագահ Մաքրոնին թշկական քննութեան ենթարկելու իր գլուխը: Իր հերթին, Մաքրոն, կ'երեւի անսալով Էրտողանի խորհուրդին, քննել տուած է իր գլուխը, որ հիմա անցած է այնքան սիրալիր յարաբերութեան՝ Էրտողանի հետ:

Խմբ.

Տեղի է ունեցել Ֆրանսիայի եւ Թուրքիայի նախագահներ Մաքրոնի եւ Էրտողանի տեսակոնֆերանսը: «Որպէս ՆԱԹՕ-ում երկու հզօր դաշնակիցներ, մենք կարող ենք զգալի ներդրում ունենալ ապահովութեան, կայունութեան եւ խաղաղութեան ապահովման գործում, Եւրոպայից մինչեւ Կովկաս, Մերձաւոր Արեւելքից մինչեւ Աֆրիքա չգուցող հսկայական տարածքում է, ասել է Էրտողանը:

Մաքրոնի հետ պրոյից յետոյ Էրտողանը յիշեցրել է, որ կողմերը այս տարի կը նշեն Անքարայի պայմանագրի հարիւրամեակը: Այդ պայմանագրով դադարեցուել էր թուրք-ֆրանսիական վերջին պատերազմը: Ըստ Էրտողանի, մինչ օրս Անքարայի եւ Փարիզի յարաբերութիւնների հիմքում դրուած է

այդ փաստաթուղթը, եւ կողմերը դեռ ունեն «համագործակցութեան լուրջ ներուժ»:

Անքարայի պայմանագիրը կնքուել էր 1921 թրւականի Հոկտեմբերի 20-ին Ֆրանսիայի եւ Թուր-



քիայի միջեւ: Ըստ այդ պայմանագրի որոշուել է նոր սահման Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ: Անքարայի պայմանագրով Ֆրանսիան Թուրքիային է վիճել հսկայական տարածքներ: Այդ պայմանագիրը փոխել է 1920 թուականին Սեւրի պայմանագրով հաստատուած թուրք-սիրիական սահմանները ի շահ Թուրքիայի, վիճելով նրան հայկական տա-

րածքներ: Ստանան, Օսմանիէն, Մարաշը, Այնթապը, Թիւրքիսը, Ուրֆան, Մարտինը, Նուսայբինը եւ Ջիլպրեն յանձնուել են Թուրքիային: Իսկ 1938-ին Ֆրանսիան Թուրքիային վիճեց հայաբնակ Ադեքսանդրեքի սանճակը: Ֆրանսիայի ոչ միանշանակ պահուածքը 1915-1923-ին քննարկման խնդիր է ընդհանրապէս:

Այդ հարցերի շուրջ Մաքրոնի ներկայի դիրքորոշումը դեռ պարզ չէ: Պնդե՞լ է արդեօք Մաքրոնը, որ Անքարայի եւ միւս պայմանագրերը, ըստ որոնց որոշուել են Թուրքիայի ներկայի սահմանները, կորցնում են իրենց ոյժը: Ինչպե՞ս կը վարուի Ֆրանսիան այս անգամ:

Լրանում է Թուրքիայի սահմանները որոշող պայմանագրերի հարիւրամեակը: Այդ պայմանագրերի թոււմ են նաեւ Ռուսաստանի հետ կնքած Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերը, որոնցով Ռուսաստանը Թուրքիային ու Բաքուին է նուիրել Կարս-Արտահանը, Արարատը, Նախիջեւանը: 2020-ի Ղարաբաղեան պատերազմը Հայաստանի չեղորացման ու մասնատման 1921-ի շարունակութիւնն է:

ՆԱԽԱԳԱՅ ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ Յ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ 91-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

(Ծարունակուած 4րդ Էջէն)

տասարդներն էին անոնք, իւրաքանչիւրը անոնցմէ թանկագին կեանք մը, որ քանդուեցաւ ընդմիջտ:

Այս է այն պահը, որ պիտի սահմանէ եւ վերահաստատէ թէ ով ենք մենք: Մեր ժողովուրդը դիմացկուն է: Մենք պիտի գոյատեւենք, որովհետեւ դարեր շարունակ, յաջողած ենք վերականգնիլ, կոտորածներու, հալածանքներու եւ ամեն տեսակի ցնցումներու եւ անբաժնութիւններու ընդմէջէն:

Իրաքանչիւր մարտահրաւերէ ետք, մեր ազգը եղած է աւելի եւս կենսունակ եւ հպարտ իր պատմութեամբ: Ուիլիըմ Մարոյեանի խօսքերով, «Ոչ մէկ ոյժ կրնայ բնաջնջել մեզ»: Մենք է որ կ'որոշենք մեր ժողովուրդի գոյատեւումը եւ հպորութիւնը:

Աւելի քան մէկ դար, Հ.Բ.Ը.Մ.ը եղած է համաշխարհային մեր համայնքի անկլինաքարը, միշտ յանձնառու իր մարդասիրական առաքելութեան, սակայն ամեն բանէ վեր, հետամուտ մեր ազգի յառաջդիմութեան եւ ամբողջականութեան: Սրբ մեր ազգի ճակատագիրը կը վտանգուի, ինչպէս այսօր, մենք կը գործենք որպէս ազգային կազմակերպութիւն, նախանշախնդիր մեր հայրենիքի ապագային եւ ապահովութեան: Հայրենիքը մեր ժողովուրդի գոյատեւման գերագոյն գրաւականն է եւ հիմքը մեր հաւատքին, մշակոյթին եւ ինքնութեան:

Իր պատմութեան ընթացքին շարունակ, Հ.Բ.Ը.Մ.ը, մեր ժողովուրդին կեանքի առանցքային պահերուն, միշտ եղած է յանդուգն, իր մարդասիրական ծառայութեան դերին առընթեր, գործելով որպէս ազգային կազմակերպութիւն: Միութեան Հիմնադիր Նախագահ Պօղոս Նուպար, կը գլխաւորէր հայ ազգային յաջորդական պատուիրակութիւնները քսաներորդ դարասկիզբին կայացած խաղաղութեան համաժողովներուն, եւրոպական Մեծ Տէրութիւններուն հետ բանակցութիւններ վարելու, Թուրքիոյ հայութեան իրաւիճակի բարելւմման, եւ հայկական անկախ պետութեան մը ստեղծումին կարելիութեան ուղղութեամբ, ի վերջոյ Սեւրի դաշնագրի ստորագրողներէն մին հանդիսանալով, 10 Օգոստոս 1920-ին: Խորհրդային իշխանութեան օրերուն, երկաթեայ վարագոյրի ետին, ան 1924-ին կը նախաշեռներ Հայաստանի մէջ բժշկական կեդրոնի մը հաստատումին, իսկ 1931-ին, Նուպարաշէն ասանի ստեղծումին, որ այսօր աւելի քան 12,000 բնակիչ ունի: 1930-ի կէսերուն, մեր Նախագահը, Գալուստ Կիւլպենկեան յաջողեցաւ յարաբերութիւններ պահպանել խորհրդային իշխանութեանց հետ, Հայաստանի մէջ պահելով Հ.Բ.Ը.Մ.ի գրասենեակը, օժանդակելով հայ ժողովուրդի բարօրութեան եւ ապահովելով Ս. Էջմիածնի իրաւասութիւնները:

Մեր Նախագահ Արշակ Գարակեօպեանի ղեկավարութեամբ, Հ.Բ.Ը.Մ.ը ստանձնեց արեւմտեան սփիւռքէն Խորհրդային Հայաստան հայրենադարձութեան կազմակերպումը եւ ֆինանսաւորումը, 1946-47 տարիներու Պաղ Պատերազմի ամենածանր տարիներուն, ապահովելով անհրաժեշտ ժողովրդաքանակը որպէսզի Հայաստանը կարենար ճանջցուի Խորհրդային Միութեան այլ հանրապետութիւններու շարքին: Այդ հանրապետութիւնն էր որ հետագային դարձաւ այժմու Անկախ Հայաստանը: Այս պատմական անկլինադարձերէն իւրաքանչիւրը մեր նախորդներու պարագային տեսիլք ունեցող առաջնորդներ կը պահանջէր: Անոնց յանդուգն նախաշեռնութիւններուն պատճառով է որ Հ.Բ.Ը.Մ.ը առանց նապտուկ դերակատարութիւն ունեցած է մեր ժողովուրդի գոյատեւման մէջ:

Նոյն համոզումով, հայ եկեղեցական ներքին տազնապի ընթացքին, 1956-ին, Նախագահ Ալէք Մանուկեան մնաց Մայր Աթոռ Ս. Էջմիածինի կողքին, համոզւած, որ անկկա կրնար գոյատեւել եւ բարգաւաճիլ միայն հայրենիքի մէջ: Եւ ի վերջոյ, բոլորդ քաջաճանօթ Էք Նախագահ Լուիս Սիմոնի համարչակ նախաշեռնութիւններուն եւ հայրենիքին ընչեռած աջակցութեան, 1988-ի Սպիտակի երկրաշարժին եւ Արցախեան առաջին պատերազմի օրերուն: Ան նաեւ իր պաշտօնի պարտաւորութիւններէն անդին, առաջնորդեց Հայաստանի Ամերիկեան Համալսարանի հիմնադրութեան նախաշեռնութիւնը, ուր որպէս երկրի ամենաառաջատար եւ յարգուած բարձրագոյն կրթական հաստատութիւններէն մին, կազմաւորուեցան ղեկավարներու եւ առաջնորդներու յաջորդական սերունդներ:

Մենք կոչ ուղղած ենք Հայաստանէն եւ Սփիւռքէն անկախ եւ կարող փորձագետներու, համախմբուելու եւ ի գործ դնելու իրենց փորձառութիւնը եւ կարողութիւնները, նոր կառավարութեան մը կազմութեան եւ ապագայի քաղաքականութեան շեւաւորումին ուղղութեամբ: Հայաստանի խորհրդարանը, ինչպէս նաեւ անցեալ եւ ներկայ ղեկավարները, մեկդի դնելով իրենց հաւանաբաշտ հերքը, պէտք է միաւորուին նման կառավարութեան մը շուրջ, վերականգնելու

համար ժողովուրդի վստահութիւնը, ապա նաեւ վերաշահելու միջազգային վստահութիւն, որպէսզի կարելի ըլլայ պատերազմին պատճառած վնասարար հետեւանքները դարմանել ի շահ մեր երկրին եւ մեր ժողովուրդին: Անոնք պէտք է որդեգրեն եւ ի գործ դնեն հաստատուն եւ համակարգուած շարք մը քաղաքական սկզբունքներ, սկսած դիւանագիտական հմտութիւններու եւ քաղաքականութեան մշակումով, ապահովելու համար Հայաստանի երկարատեւ գոյապահպանումը եւ ազդու դերակատարութիւնը շրջանի աշխարհաքաղաքական միջավայրին մէջ: Աւելին, Անոնք պէտք է կեդրոնանան կարճաժամկետ եւ երկարաժամկետ հասարակական-տնտեսական վարգաւան ուղղուած իրատես նպատակներու գործադրութեան վրայ, որոնք կրնան պահպանել երկրի համակարգը եւ ժողովուրդը:

Մենք հաւատարիմ կը մնանք Հայաստանեայց Եկեղեցիին, որ հիմա ինչպէս եւ անցեալ դարերուն, ծառայած է որպէս մեր հաւատքի, մշակոյթի եւ գոյապահպանման ամուր միջնաբերդը: Կոչ կ'ուղղենք հայութեան, զօրավիգ կանգնելու մեր ազգային եկեղեցիին, որպէս կառոյց մը, որ կը պահէ մեր հոգեւոր տոհմիկ ժառանգութիւնը եւ լոյսի տակ կը բերէ մեր ինքնութիւնը միջազգային համայնքէն ներս: Թէեւ ներկայիս իշխանութիւններու կողմէ հարցականի տակ դրուած է այդ, անհրաժեշտ է Հայաստանի հանրային կրթութեան ծրագրին մէջ պահել Եկեղեցւոյ Պատմութիւնը, որ փաստօրէն մեր ազգի վերջին երկու հազար տարւան պատմութիւնն է:

Ընդհանուր Ժողովի այս առիթով, կոչ կ'ուղղենք մեր բոլոր մասնաճիւղերուն եւ անդամակցութեան աւելի սերտօրէն գործակցելու Կեդրոնական Վարչութեան եւ շրջնային տարբեր յանձնախումբերուն հետ, բերելով իրենց գաղափարները եւ լաւագոյն ներդրումը նորարար ծրագիրներու նոր ալիք մը ստեղծելու համար: Մի սպասէք որ նախաշեռնութիւնները գան վերէն: Միասնաբար պեղեցէք նոր կարելիութիւններ: Մենք կրնանք տարակարծիք ըլլալ որոշումներու եւ արդիւնքներու շուրջ: Սակայն մենք մեր բոլոր որոշումները կը կայացնենք բարեկամեցողութեամբ: Անհրաժեշտ է հանդուրժողութեամբ, համակրանքով եւ գնահատանքով վերաբերիլ մեր շրջանակներու ղեկավարներուն եւ անդամներուն նկատմամբ, միշտ յիշելով, որ մեր ոյժը մեր միասնականութեան մէջ է:

Մենք հպարտ ենք որ Հ.Բ.Ը.Մ.ը հաւատարիմ մնացած է իր ծառայութեան պատմական առաքելութեան, արժանանալով աշխարհի տարածքին բոլոր շրջանակներու բարձր վստահութեան: Այդ վստահութիւնը արդիւնք է աւելի քան մէկ դարու ծրագիրներու եւ աջակցութեանց, որոնք քայլ պահած են մեր ժողովուրդի կարիքներուն հետ: Այսօր մեզմէ կ'անկնկալուի նոյնը: Մենք պատրաստ ենք ընդառաջելու մարտահրաւերին, նորարարելու եւ ստեղծելու ապագան որով կրնանք հպարտ զգալ բոլորս:

Մենք կրնանք չեռք չեռքի գործել, ամոքելու համար մեր ազգը:

Կրկին անգամ շնորհակալութիւն կը յայտնենք մեր մեծ կազմակերպութեան նկատմամբ ցուցաբերած չեր նուիրումին եւ աջակցութեան համար: Ձեր միջոցաւ է որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, կը շարունակէ պահել իր բարձր վարկը եւ վստահութիւնը:

Կը բաժնուինք, շուտով անշամբ չեր հետ հանդիպելու յոյսով:

(Յապաւումներով)

Փետրուար 27, 2021

Ց Ա Ի Ա Կ Ց Ա Կ Ա Ն

Սրտի դառն կսկիծով իմացանք լիբանանահայ համայնքի երեւելի դէմքերէն, բժիշկ, հասարակական գործիչ, արուեստագետ, նկարիչ, ՀԲԸՄ-ՀԵԸ-ի բարեկամ տոքթ. **Յարութիւն Նիկողեանի** անժամանակ մահը:

Բժիշկ Յարութիւն Նիկողեանը հաւատարիմ ընթերցողն ու գնահատողն էր «Պայքար»ին. ան տիպար ներդաշնակութիւն մըն էր սփիւռքահայ ուսանողի, բժիշկի, գրիչի մարդու, բանաստեղծի, յառաջադէմ եւ ազատամիտ մտածող մտաւորականի:

Այս տխուր առիթով մեր խորապգած ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին՝ բժշկուիի էմմային եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Անդրանիկ Մշակութային Միութիւն

ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՏԵՆԶՈՒԹԻՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՂ ԴԵՄՔԸ...

(Ծարունակուած 10րդ Էջէն)

որեւէ միջոցով հնարաւորութիւն էլ լինի, այս կամ այն քիւրտ ցեղը գրգռել կառավարութեան դէմ, գործնական նշանակութիւն ունենալ չէ կարելի, որովհետեւ այդ գրգռումը ընդհանուր նշանակութիւն չէ կարող ունենալ՝ քիւրտերու ցեղական թշնամութիւնների պատճառով. կառավարութեան դէմ ելած մի քիւրտ ցեղի դէմ կը միանան կառավարութեան հետ այդ ցեղի թշնամի ցեղերը եւ նրա ըմբոստացումը կ'անդամաւորւեն» (Էջ 234):

Չօր. Անդրանիկ Օզանեան շատ զգոյշ կեցուածք ուներ Սրիտթուրքերու նկատմամբ: Ան բնաւ չէր հմայուած անոնց փայլուն սակայն սուտ լոյսնոցներէն: Ան բոլոր հայերը կը զգուշացնէր Սրիտթուրքերու գալիք շարիքէն ըսելով. «Թուրքը թուրք է»: Անդրանիկ Չելեպեան հետեւեալ չեով կը գնահատէ Չօրավար Անդրանիկի առողջ կեցուածքը. «Հայոց պատմութեան մեծագոյն հերոսներէն Անդրանիկը օժտուած էր զօրաւոր ներգիտակցութեամբ եւ ուներ քաղաքական բացառիկ զգայնութիւն եւ անսովոր հեռատեսութիւն: Դեպքերը շիտակ գնահատելն ու գալիք դեպքերը բնազդօրէն նախատեսելը բնատուր չիրքերէն մէկն էր հայոց դիւքազնին... Անդրանիկ իսկապէս գիտէր տեսնել...: Ան գիտէր տեսնել աւելի՛ հեռուն, գալիքը, վերջը: Այդ բացառիկ պահերը իր տրամաբանելու կարողութեան կու տային մարգարեական հասողութիւն մը, բառին թանջրապէս իմաստով» (Էջ 248-249):

Այսքանով կ'ամփոփենք Անդրանիկ Չելեպեանի գրիչէն մեջքերումները, ընդհանուր պատկեր մը տալով հայոց ազատատենչութեան պայքարին նկատմամբ իր մօտեցումներուն:

Պէյրուք

ԱՆՑԵԱԼԷՆ ՅԻՇԱՏԱԿ ՄԸ -20-

Յիշատակի լուսանկար ատենի ՌԱԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկեր Մեթր Հրաչեայ Սեդրակեանի Նիւ Եորք այցելութեան առիթով 1989ին, Պերճ Սեդրակեանի Էնկլվուտ Գլիֆֆսի բնակարանը: Մտերիմ հանդիպման նկարին մէջ կ'երեւին Մեթր Հրաչեայ Սեդրակեան (յախէն, կոնակէն), դիմապը ընկերներ Յակոբ Վարդիվառեան, Նրուանդ Ապատեան եւ Մեթր Պերճ Սեդրակեան:



ՆԱՍՏԱՆԵՐ ԵՐԿՐԻՑ

Նամակ 133

Մեր գիրք չկարդալու - գիրքը մերժելու մասին

Սիրելի բարեկամ,
Ես ամբողջ կեանքում ապրել եմ այն գիտակցությամբ, որ մենք գրքի ժողովուրդ ենք: Ես միշտ ներքին հպարտությամբ եմ ունեցել այդ մտքից: Բայց, ահա՛, իմ այդ գիտակցությունը ես այդ հպարտությունը մնացել եմ անցեալում:

Ես երեխայ հասակից, դպրոցական վաղ տարիքից տեսել եմ մեր ժողովրդի մեր գրքի ու գրականության հանդեպ: Մեր լեռնային փոքրիկ գիւղում դպրոցական երեխաները գիւղի փոքրիկ, համեստ գրադարանի մշտական յաճախողներն էին, անյազ ընթերցողներ: Գիւղի բնակիչները, գիւղացի մարդիկ, որոնք գիշեր-ցերեկ աշխատում էին,- աշխատում էին կոլտոսի-կոլտոստեությունների մեջ՝ դաշտներում, անասնազոմներում եւ այլուր, եւ յետոյ իրենց տնտեսության մեջ,- ահա այդ մարդիկ գիրք էին կարդում, գիրքը վերցնում էին միմեանցից, փոխանցում էին իրար... Եւ կարդում էին մեծ սիրով, պատմում էին բարձրաձայն... Ես դպրոցական էի, երբ լոյս տեսա Սերո Սանգաղեանի «Մխիթար Սպարապետ» վեպը, 40000 տպաքանակով: 1961 թուականն էր: Երկու տարի յետոյ, 1963-ին, վեպը վերահրատարակուեց 50000 տպաքանակով:

Երկու տարի յետոյ, 1965-ին, լոյս տեսա Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» 50000 տպաքանակով: Մէկ տարի յետոյ, 1966-ին վերահրատարակուեց «Անլուելի վանգակատունը» 25000 տպաքանակով: Ես յատկապես ուրիշ գրքերի անուն չտուեցի եւ կ'ասեմ, թէ ինչո՛ւ:

Աստուած իմ, ի՞նչ էր կատարում այդ օրերին: Մարդիկ կրկնակի, եռակի եւ չգիտեմ, թէ էլ ինչքան էին վճարում այդ գրքերին հասնելու համար: Հիմա ասեմ, թէ ինչու այդ գրքերի անունները տուեցի: Դա ընթերցասեր մեր ժողովրդի վերաբերմունքն էր իր անցեալի, մեր պատմության, մեր ժողովրդի ճակատագրի հանդեպ: Պարզ մարդիկ իրենց խորապես հայ էին պզուտ:

Իմ ուսանողության տարիներին մենք ժամերով հերթ էինք կանգնում գրախանութների առջեւ, որպէսզի նոր լոյս տեսած գիրքը գնենք: Եւ շատ յաճախ մեզ գիրք չէր հասնում, սպառում էր: Հերթում կանգնած մարդիկ գոռում-բողոքում էին, թէ ամէն գնորդի մէկ հատ գիրք տուէր, որ բոլորին հասնի: Ծարպիկ գնորդները առնում էին մի քանի հատ, հերթ էին կանգնում տարբեր գրախանութներում եւ յետոյ դրանք վաճառում էին եռակի ու քառակի գնով:

Բոլոր մարդիկ գրադարան էին կազմում, բոլորի տներում գրադարան կար: Մենք ա'յս ժողովուրդն էինք, ես սրանով էի հպարտանում:

Եւ յետոյ ամէն ինչ տակնուվրայ եղաւ: Այդ ժողովուրդը չքայաւ, անհետացաւ: Ի՞նչ եղաւ, ո՞ւր կորաւ այդ ժողովուրդը: Այս հարցին կը պատասխանեմ քիչ յետոյ: Հիմա սկսեմ այլ տեղից:

Գրող Վահագն Գրիգորեանը,- ես նրա մասին գրել եմ քեզ,- ընտանեկան հանգամանքների պարտադրանքով, եւ անշուշտ, նաեւ՝ մեր իրականության, ընտանիքով տեղափոխուել եւ ապրում է Լիտուայում (Լիտուանիա), Վիլնիւս քաղաքում: Ուրեմն, ահա թէ ինչ էր պատմում Վահագնը, երբ երկու տարի առաջ եկել էր Երեւան: Ասեմ, որ ամէն տարի, ի հարկէ, գալիս է:

Ուրեմն, Լիտուայում առաջին գրքերը, սկսնակ գրողների գրքերը տպագրում են 2000 տպաքանակով: Երկու հազար:

Արդէն փորձառու, ճանաչում ունեցող գրողների գրքերը՝ 5-7000 տպաքանակով: Եւ գրքերը վաճառում են, երկու-երեք ամսում սպառում են:

Տարին երկու անգամ գրքի տօնավաճառ է լինում: Մուտքը՝ վճարովի: Սովորական մարդկանց համար՝ 20 եւրօ, գրողների անդամներին՝ 10 եւրօ: Վահագնը ասում էր, որ մարդիկ գրքերը պարկերով են տանում, այնպէս, որ մինչեւ օրրոպ վերջը տօնավաճառ քերում թողր գրքերը վաճառում են:

Դէ, համեմատիր: Երեւանում այսօր 2-300 օրինակով տպուած գրքերը տարիներով չեն վաճառում: Ինչ հեղինակ ուզում է լինի:

Լիտուան էլ մեզ նման յետխորհրդային փոքր հանրապետութիւն է, գրեթէ մեր չափ բնակչությամբ՝ 1987-ին ուներ 3 միլիոն 600000 բնակչութիւն: Այսօր Լիտուայի բնակչության կեսը հեռացել է երկրից, արտերկրում աշխատանք գտնելու եւ այլ պատճառներով:

Այդ ինչպէ՞ս է, որ Լիտուայում այսօր գիրք կարդում են, Հայաստանում՝ ոչ: Հիմա տամ դրա բացատրությունը:

Խորհրդային իշխանության տարիներին գրականության եւ մշակույթի հանդեպ պետական յարգալից վերաբերմունք կար: Խորհրդային երկրի կուսակցական դրոշմալից համագումարներում գրողների, նկարիչների, կոմպոզիտորների եւ ստեղծագործական այլ միութիւնների ղեկավարները նստած էին լինում քեմում, ինչպէս ասում էին՝ նախագահութիւնում, երկրի ղեկավար առաջին դէմքերի կողքին: Ժողովուրդը տեսնում էր դա: Դա պետական յարգալից վերաբերմունք էր մշակույթի հանդեպ: Հայաստանում այսօր գրողների կամ նկարիչների միութիւնը համարում է նամականիշ հաւաքողների կամ գարեջրի սիրահարների ընկերության պէս մի բան:

Բայց սա հարցի, անելի ճիշդ, ողբերգության միայն սկիզբն է: Հայաստանում պետականօրէն, գիտակցաբար, միտումնաւոր ոչնչացուել է յարգալից վերաբերմունքը, սերն ու յարգանքը կրթության, մշակույթի եւ գրականության հանդեպ: Ասեմ, թէ ինչպէ՞ս եւ յետոյ, թէ՛ ինչո՞ւ:

Խորհրդային իշխանության տարիներին հայկական հեռուստատեսութիւնը գրական-մշակութային հարուստ ու կայուն ծրագրեր ուներ: Կար հեռուստաթատրոն, որը շաբաթը երկու ներկայացում էր հրամցնում հեռուստադիտողներին: Ներկայացում էին ինչպէս հայ հեղինակների եւ, ի հարկէ, անպայման արեւմտահայ գրողների պիեսները, այնպէս էլ արեւմտեան հեղինակների գործերը: Ներկայացում էին նաեւ վրացի, մոլդաւացի, ռուս եւ այլ ապգութիւնների հեղինակների գործերը:

Հեռուստատեսութիւնը ուներ «Պոեզիայի ժամ», «Նոր գրքեր», «Հանդիպում գրողի հետ», «Հայ դասական գրականութիւն» եւ նման այլ կայուն, մշտապես կրկնուող եւ շարունակուող հաղորդաշարեր: Հեռուստահաղորդումներում մեծ տեղ ունէին ասմունքի երեկոները, գրական-երաժշտական բազմապիսի հաղորդումները, դասական գրողների տարեդարձների ու յոբելեանների առիթներով հաղորդումները... Չշարունակեմ... Դեռ հայ դասական երաժշտութեանը, ճարտարապետութեանը, կերպարուեստին նուիրում հաղորդումները չիղջեցի:

Այդ բոլորը այսօր չկան: Այսօր հայ հեռուստատեսութեան բոլոր ալիքներով գոեհիկ, արուեստի հետ որեւէ կապ չունեցող սերիալներ են, փողոցային լեզուով, ժարգոնով, բանաստեղծութեամբ ու դարձուածներով լեցուն... Հայերէն անհեթեթ տեքստերով a թաւորքա երգերը լցրել են հեռուստատեսային եւ ռադիօթերը: Եւ այս բոլորը արդէն երկու տասնեակ տարուց աւելի: Եւ պատկան մարմինները ոչ միայն աչք են փակել այդ բոլորի վրայ, այլեւ խրախուսել են դրանք: Առաջին նախագահի ժամանակ լոյս ու ելեկտրականութիւն չկար, հեռուստատեսութիւնը փաստօրէն գրեթէ չկար: Հայաստանի երկրորդ եւ երրորդ նախա-

Մեր Արուեստագէտները - 214

ՆԱՐԵԱ ԱՌԵՏԻՍԵԱՆ

Հայ ժամանակակից նկարիչ եւ արուեստի տեսաբան Նարեկ Մինաս Աւետիսեան ծնած է Սեպտեմբեր 20, 1969ին Երեւանի նկարիչներ Մինաս Աւետիսեանի եւ Գայանէ Մամաջանեանի ընտանիքին մէջ: 1988 թուականին



աւարտած է Երեւանի Փանոս Թերլեմեկեանի անուան գեղարուեստի ուսումնարանը եւ 1988-1992 թուականներին ուսանած է Երեւանի գեղարուեստի ակադեմիայի նկարչութեան բաժնին մէջ:

Ունի ստեղծագործական լայն գործունեութիւն եւ տուած է անհատական եւ մասնակցած՝ խմբային ցուցահանդէսներու. 1992ին անհատական ցուցահանդէս «Ակրոմի ներկայացում» ՆՆ պատկերասրահ, Լիւպլին, Լեհաստան, 1993ին անհատական ցույցա-

հանդէս. դասական երաժշտութեան միջազգային Ե. փառատօնի», Ֆրանսա, 2000ին խմբային ցուցահանդէս «Հայ նկարիչները վիրտուալ յարաբերութիւններու մէջ», Երեւան եւ դարձեալ նոյն թուականին Կիւմրիի «Երկ-



րորդ միջազգային արուեստի փառատօն»ին եւ Երեւանի մէջ «Զայնի փոխարէն» խմբային ցուցահանդէս Հայ-Արթ մշակութի կեդրոն:

2001 թուականին Երեւանի մէջ կը մասնակցի երկու ցուցահանդէսներու՝ «Ութօպիանա» հայ-գլոխցերիական խմբային ցուցահանդէսին եւ «Տարածութիւն եւ շայն» ցուցահանդէսին. իսկ 2002ին կը մասնակցի Երեւանի «Ալթերնատիվ» արուես-

տի փառատօնին եւ Թեհրանի ժամանակակից արուեստի» ցուցահանդէսին: 2003ին Պերլինի Իֆա պատկերասրահի մէջ խմբային ցուցահանդէսին եւ Երեւանի «Մօտեցում» խմբային ցուցահանդէսին Տերնօ երաժիշտներու հետ:



2005ին Երեւանի Ակադեմիայի պատկերասրահին Նարեկ կը մասնակցի խմբային ցուցահանդէսի եւ յաջորդ տարի Երեւանի մէջ կը ներկայանայ անհատական ցուցահանդէսով՝ «Լոյս եւ տարածութիւն» թեմայով: 2009ին դարձեալ անհատական ցուցահանդէս կու տայ «Վերադարձ» թեմայով Երեւանի քաղաքապետարանի շէնքին մէջ: 2011ին Վահան Արծրունիին հետ Վերմիրի «Մարգարիտ օդով աղջկայ» 33 չեւփոխումներով կը ներկայանայ: Ու այսպէս 2013ին՝ Պերլին եւ 2014ին Հալէի (Գերմանիա) Մորեպոլիկի ժամանակակից արուեստի թանգարանին մէջ «Մինաս եւ Նարեկ Աւետիսեան. Մոտեմն ու աւանկարտ Հայաստանի մէջ» ցուցահանդէսը:

գահների գրագիտութեան, ճաշակի եւ իմացութեան մակարդակը մենք շատ լաւ գիտենք:

Չեղաւ, որ մի օր երկրի նախագահը չեղքը խփեր սեղանին եւ ասէր հեռուստատեսութեան՝ պարոնայք, այս ի՞նչ էր անում: Սթէ հեռուստաալիքը տուել են չեզ, դուք այն սեփականաշնորհել էք, չի նշանակում, թէ այն պիտի գործի երկրի ու ժողովրդի դէմ:

Չեղաւ նման բան: Չեղաւ, որովհետեւ հեռուստաալիքները հենց երկրի աւագակային տէրերի հրահանգն էին կատարում, ծառայում էին նրանց մանր, անչնական շահերին ու նպատակներին՝ ամէն գնով իշխանութիւնը պահելուն եւ ժողովրդին գոմբի էին դարձնում: Եւ դարձրին: Չոմբիին կառավարելը հեշտ է եւ անվտանգ: Եւ քան-երեսուն տարում գոյացաւ նոր գիտակցութեամբ նոր հասարակութիւն, որ ատում է գիրքն ու կրթութիւնը:

Սիւս թէ ինչ եղաւ մեզ հետ:

Իսկ դու ասում ես...

Մնամ

երկրիս սակաւաթիւ ընթերցողներից մեկը՝

Նրուման Տեր-Սաչատուրեան
Երեւան